

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԴԵԳԻԵԳԱԾՈՒ

ديجيتال

Հրատարակությունը հանդիս է Հ.Բ.Բ.Մ.Ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



Ohan Janikian

Արսեն Գրիգորեան եւ «ՄՐՐՕ» սոււազախումըը

**ՀԱՄԵՐԳ
ՀՀ-Ի ԱՆԿԱՄՈՒԹԵԱՆ
20-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ**

Ohan Janikian

Արսեն Գրիգորեան եւ Աննա Խառատեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ
Արաքսի Տեղափոխում

ՓՈՒՆ ԽՄԲԱԳԻՐ
Շաքլ Մարգարեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ
Պերճ Թերզեան

ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ
Անայիս Ճիզմեճեան

ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ
ՁԵՒԱՌՐՈՒՄ
Շահե Լուսարարեան

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒԱԾԸ
Գարոլին Հեշեմա
Արփի Խաչերեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

ԹԻՒ 61 Նոր Շրջան
ՇՈՎՏԵՄԲԵՐ 2011

«Հայաստան - Հայաստան» Առասպել, Երագ Եւ Իրականութիւն <i>Արաքսի Տեղափոխում</i>	1
Հայաստանի Անկախութեան 20-Ամեակը Գահիրեի ՀՀ Դեսպանատան Մէջ <i>Շ.Մ</i>	3
Հայաստանի Անկախութեան 20-րդ Տարեդարձին Առթիւ, Հայաստանի Նախագահը «Պատուոյ» Շքանշանով Կը Պարգևատրէ ՀԲԸՄԻ Նախագահը <i>Թրգմ. Ա. Ճ</i>	4
Նախագահական Շքանշաններ Տեսարթ Պերճ Թերզեանի Եւ Վարդ Ալեքսանեանի «Տ»	5
Նամակ	6
Նամակ	7
Ունկնդիր Սրտեր Նուաճողը՝ Արսէն Գրիգորեան <i>Միհրան Ղազէեան</i>	8
Տպագրութեան Նուիրուած Կարենոր Գիտակժողով Մը՝ Աղեքսանդրիոյ Գրադարանին Մէջ <i>Շ.Մ.</i>	13
Տիգրան Չուխաճեանի «Կարինէ» Օփերէթի Ներկայացումը՝ Գահիրեի ՀԲԸՄ-ի Հելիոպոլսոյ Չագըր Մշակութային Կեդրոնին Մէջ <i>Թրգմ. Ա. Ճ</i>	14
Երկու Կարենոր Իրադարձութիւններ <i>Հրանդ Զէշիշեան</i>	15
Այդ Անհաղորդ, Բայց Տաղանդաւոր Արուեստագետը՝ Շանթ Աւետիսեան (Ճննդեան 60-Ամեակին Առիթով) <i>Յ. Ծուլիկեան</i>	16
Երեւանի Մէջ Բացուեցաւ «Թումօ» Կեդրոնը <i>Պատրաստեց՝ Շ. Մ..</i>	20
Ճատրակը Դասաւանդութեան Նիւթ՝ Հայաստանի Դպրոցներուն Մէջ <i>Պատրաստեց՝ Շ. Մ..</i>	22
Գահիրեի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Տարեկան Մրցաշարը (2011) <i>Սոսի Ներսէսեան-Յակոբեան</i>	23
ՀԲԸՄ-Արարատը Եւ ՀԲԸՄ-Նուպարը Կը Կազմեն 12 Եւ 14 Տարեկանէն Վար Պասքէթբոլի Երկու Միացեալ Խումբեր	26
ՀԲԸՄ«Անդրանիկ»ի Սկառուտական Բանակումին Մասնակցեցան 150 Արիներ Ու Արեւոյշներ	27
Գահիրեի ՀԲԸՄ-ՆՈՒՊԱՐԻ Կազմակերպած Զբօսապտոյտը Դեպի «Այն Սոխնա»	27
Անդամական	28



« ՀԱՅԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ » ԱՌ-ԱՍՊԵԼ, ԵՐԱԶ ԵՒ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1946 թուականն էր: Դեպի Հայաստան զանգուածային ներգաղթը՝ ամենօրեայ խօսակցության սիրտն էր Հալեպի հայերուն: Շատ շատերու համար իրենց ոտքին տակ կրկին հայրենի հող ունենալու երազանքի իրականացում:

Մինչ ներգաղթելու դիմած մեր թաղին մեծահասակները անհամբեր կը սպասեին «քարթ»ին, որ պիտի աւետեր իրենց «Դրախտավայր Հայաստան» (այդպէս էր Հայաստանը համաձայն տարածուած գովաբանութիւններուն) մեկնելու արտօնութիւնը, մենք՝ փոքրերս, աւելի ճիշդ մեր բակի փոքրերս, ունեինք մեր երեւակայած առասպելական Հայաստանը եւ անոր մասին մեր հնարած խաղը:

Մենք կը բնակէինք Վեքիլիէ կոչուող հայաշատ շրջանին վերջաւորութեան, անել փողոցի մը մէջ: Անոր աջին ու ձախին գտնուող բակերուն հայ բնակիչներուն մեծամասնութիւնը Այնթապէն գաղթած հայեր էին: Իւրաքանչիւր բակի մէջ կը բնակէին 1-4 ընտանիք, համաձայն բակերու մեծութեան:

Բակը, ուր կը բնակէինք երեք ընտանիք, մօտաւորապէս 8 x 10մ² տարածութիւն ուներ: Չայն դրացի բակէն անջատող բարձր պատին վրայ սենեակներ չկային: Ան շինուած էր քառակուսի մեծ քարերով:

Այդտե՛ղ էր բակին մէջ բնակող փոքրիկներուն ամենօրեայ խաղավայրը: Այդ պատին վրայ մենք ունեինք մեր առասպելական Հայաստանը ուր կը խաղայինք մեր երեւակայածին խաղը:

Խաղը կը կոչուէր «Հայաստան - Հայաստան»: Դրացիներուն երեխաներն ու ես, բոլորս 6-12 տարեկան, մեր սենեակներէն բակ կ'իջնէինք եւ մինչեւ մեր ձանձրանալը «Հայաստան - Հայաստան» կը խաղայինք: Պատին քառակուսի մեծ քարերը կը ներկայացնէին Հայաստանի բնակարանները: Անոնց վրայ տեղ-տեղ կաւիճով գծած էինք մեծ ու փոքր կոճակներ, որոնցմէ մեծերը կը ներկայացնէին բնակարանին սենեակներն ու յարակից մասերը, իսկ փոքրերը՝ յատկա-

ցուած էին տան մէջ կատարուելիք գործողութիւններուն:

Խաղը կը սկսէր Հայաստան ներգաղթելով: Իւրաքանչիւրս իր հասակին բարձրութեանը յարմարող բնակարան մը կ'ընտրէր, ապա՝ իր երեւակայական պայուսակներէն իբրեւ թէ կը հանէր իրերը ու կը դասաւորէր սենեակներուն ու խոհանոցին մէջ:

Երբ ամէն ինչ պատրաստ էր, մեծերը՝ 9-12 տարեկան, 6-7 տարեկան փոքրերուն ձեռքերը բռնած կ'երթային այցելութեան ունէ մէկուն սոր բնակարանը: Այդ ժամանակ էր որ կը սկսէր գծուած փոքր կոճակներուն հետաքրքրական աշխատանքը:

Այնպէս համոզուած էինք, որ մեր երեւակայած Հայաստանին մէջ ամէն գործողութիւն ու աշխատանք կոճակներով կը կատարուէր: Երբ դուրսէն կոճակին տրուած մատի մէկ հպումով դուռը զարնուէր, ներսէն այլ կոճակով մը դուռը կը բացուէր ու հիւրերուն բնակարանէն ներս մուտքով կը սկսէր հիւրասիրութեան յատուկ կոճակներուն աշխատանքը:

Անմիջապէս խոհանոցին մէջի փոքր կոճակները մեր մատերուն հպումներով գործի կ'անցնէին: Սուրճ, թէյ, օշարակ, անուշեղէն եւ պտուղ պատրաստ կը սպասէին որ տանտիրուհին հիւրերուն սպասարկէ: Անշուշտ հիւրերուն մեկնելէն ետք, կը սկսէին այլ աշխատանքներ: Սպասները լուալ, չորցնել, վերցնել, տունը մաքրել, լուացք ընել: Ամենայոզնեցուցիչը տանտիրուհին համար լուացք փռելն էր: Դեռ չէինք երեւակայէր որ կարելի էր այլ կոճակով մըն ալ լուացքը չորցնել:

Մօտ երկու տարի մենք մեծ ոգեւորութեամբ խաղացինք կոճակներով «Հայաստան-Հայաստան» խաղը մեր բակի պատին վրայ, այլ ճոխացուած տարբերակներով:

Տարիները թաւալեցան՝ իրենց հետ տանելով մեր մանկութիւնն ու անմեղութիւնը: Սակայն մնաց Հայաստանի հանդէպ այն մեծ սէրը, որուն սերմերը մեր մէջ սերմանած էին մեր ծնողներն ու Հալեպի Կիլիկեան Վարժարանի մեր ուսուցիչ-ուսուցչուհի-



ները եւ մասնաւորապէս 6-րդ դասարանի մեր հայերէնի դասատու, դպրոցին տնօրէնը՝ Տիար Երուանդ Պապայեանը, որ այնպիսի սիրով ու ոգեւորութեամբ ընթերցումներ կը կատարէր հայ գրականութենէն, որ կը տամկացներ մեր աչքերը. կը խռովէր մեր հոգիները ու հայրենասիրութեան հուրով կը լեցներ մեր սրտերը:

Երկար ժամանակի պէտք չեղաւ որ հասկնանք, թէ մեր Հայաստանը առասպելական ու երագային չէր: Ան իրական էր եւ կը կոչուէր Խորհրդային Հայաստան: Մէկը՝ Խորհրդային Միութեան 15 հանրապետութիւններէն, որ որոշ առումներով ուներ իրեն յատուկ «կոճակներու դրութիւն»ը, ուր միայն որոշ մարդիկ ունէին իրաւունքը իրենց մատերու հպումներով խաղալու «Հայաստան-Հայաստան»:

Արդէն հասուն մարդիկ, այցելելով Խորհրդային Հայաստան, մենք ականատես եղանք արուեստի, գրականութեան, շինարարութեան ու այլ մարզերու մէջ ստեղծագործող հայ ժողովուրդի սիրանքին ու մեր հոգիները լեցուեցան անհուն հպարտութեամբ:

Մեծ ցաւով եղանք նաեւ ունկնդիրը «քողարկուած ճշմարտութիւններու», որոնք խորապէս ցնցեցին մեզ, սակայն առաւել եւս խորացուցին սերը հանդէպ մեր ժողովուրդին ու անոր անկոտորում կամքով կերտուած մեր հայրենիքին: Իսկ այժմ տեսնելով ներկայ Անկախ Հայաստանը ու հոն ապրող մեր նոյն ժողովուրդը, կ'իյնամ մտորումներու մէջ եւ «ինչո՞ւ»ներու շարքը յաճախ հանգիստ չի տար ինծի:

Տարիները կրկին թաւալեցան ու Խորհրդային Հայաստանը եւս անցաւ պատմութեան:

Հայ ժողովուրդի հոգւոյն մէջ ծուարած ազատութեան անմար հուրը հրաբուխի նման ժայթքեցաւ ու չհանգեցաւ մինչեւ գերուած Արցախը հայորդիներու արիւնով տիրացաւ իր անկախութեան ու հայրենի ժողովուրդը 21 Սեպտեմբեր 1991-ին, իր գաւակներուն բացարձակ մեծամասնութեան «Այո» քուէարկութեամբ Հայաստանը հռչակեց Ազատ եւ Անկախ:

Արդէն 20-ամեայ պատմութիւն ունի Անկախ Հայաստանը: 20-րդ դարու վերջաւորութեան իրեն բաժին ինկած Սումկայիթի

ջարդերը, երկրաշարժի արհաւիրքը, Արցախի արիւնալի պատերազմը, նաեւ ցաւալի այլ իրադարձութիւններ, իսկ այժմ նաեւ զանգուածային արտագաղթը, կը շարունակեն ջլատել ժողովուրդին հաւատքը իր պետութեան հանդէպ:

Նկատի ունենալով ներկայի յուսադրող իրավիճակը՝ որպէս արդիւնք Պետութիւն, Եկեղեցի, Սփիւռք եւ զգօն ժողովուրդ միասնական ճիգերուն, մենք անկեղծօրէն կը հաւատանք թէ հեռու չէ այն օրը, երբ դարձեալ աստանդական մեր ժողովուրդին գաւակները պիտի սպասեն, թէ եր՞բ իրենց «քարթ»ը պիտի ելլէ, որ կրկին բոյն դնեն արդարութեան, հանդուրժողութեան ու սիրոյ հիմքերու վրայ հաստատուած եւ հաւատքի լոյսով զեղուն, Արաքսի միւս ափը նուաճած Անկախ Հայրենիքին մէջ:

Հիմա ես արդէն տարեց կին եմ եւ կրկին տոգորուած՝ այս անգամ գիտակից հայրենասիրութեամբ, դարձեալ «կոճակներով» կը խաղամ «Հայաստան-Հայաստան»:

Հեռատեսիլի հեռավարին կոճակներուն հպումով անոր ալեհաւաքը զիս կը փոխարէ հայրենիք: Ի տես եւ ի լուր այդտեղ գործող զանազան ալիքներու հաղորդումներուն, քննարկումներուն, հարցազրոյցներուն, հաղորդաշարերուն եւ անոնց ետեւ քողարկուած կամ բացայայտ ակնարկութիւններուն, Հայաստանի արտաքին թէ ներքին քաղաքականութեան եւ այլ հարցերու մասին, մերթ ընդվզումի ու մերթ ցնծութեան յոյզեր կը պարուրեն հոգիս:

Սակայն անկախ, թէ ինչ կ'ըսեմ ընդվզումիս պահերուն, ես քաջ գիտեմ, որ հպարտ եմ մեր ժողովուրդին ո՛չ միայն անցեալի սիրանքներով, այլ նաեւ ներկայի մաքառումներով:

Այսօ՛ր Սեպտեմբեր 21 Է:

Այսօ՛ր Անկախ Հայաստանի 20-ամեակն Է:

Առաւօտ Է: Կը սեղմեմ հեռավարին Հայաստանը միացնող կոճակը: Տամուկ աչքերով կը դիտեմ հայկական զօրքին տողանցքը ու շշուկով կը գոռամ:

Բարե՛ւ, բարի լոյս Հայաստան:

Շնորհաւոր ըլլայ 20-ամեայ տարեդարձը:

Բարի ճանապարհի դէպի Դրախտավայր Մայր Հայաստան:

Արաքսի Տօվլէթեան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՄՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԸ ԳԱՀԻՐԷԻ ՀՀ ԳԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ



Հայ ժողովուրդի համար սուրբական ու հրաշալի տօնի մը՝ մեր Հայրենիքի Անկախութեան 20-ամեակին սուրբուած էր Գահիրէի մէջ Հայաստանի Հանրապետութեան Դեսպանութեան տուած պաշտօնական ընդունելութիւնը, որ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 22 Սեպտեմբեր 2011-ին:

Ընդունելութեան ներկայ գտնուող մօտաւորապէս 800 հիւրերուն մաս կը կազմէին Եգիպտոսի Առողջապահութեան նախարարը, Արտաքին Գործերու, Մշակոյթի եւ Կրթութեան փոխ-նախարարները, եգիպտահայ թեմի բարեխնամ Առաջնորդ Տ. Աշոտ Եպսկ. Մնացականեան, Եգիպտոսի հայ կաթողիկէ համայնքի Վիճակաւոր, Արհիպպատի Գերապայծառ Գրիգոր Ինգևատիոս Գուսան, Եգիպտոսի տարբեր նախարարութիւններու եւ գերատեսչութիւններու պատասխանատու պաշտօնեաներ, Գահիրէի մօտ հաւատարմագրուած 60-է աւելի երկիրներու դեսպաններ եւ դիւանագետներ, հասարակական-քաղաքական գործիչներ, գործարարներ, արուեստագետներ ու լրագրողներ, ինչպէս նաեւ Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ Թեմական ու Քաղաքական ժողովներու ներկայացուցիչներ ու հայ համայնքի բազմաթիւ անդամներ եւ Եգիպտոս բնակող ՀՀ քաղաքացիներ:

Եգիպտոսի մօտ ՀՀ դեսպան Արմէն Մելքոնեան խօսք առնելով՝ շնորհաւորեց Անկախութեան 20-ամեայ տարեդարձը, նշելով որ այսօրուան Ազատ - Անկախ Հայաստանը հայ ժողովուրդի դարաւոր իղծերու

եւ երազանքներու իրականացումն է: Դեսպանը անդրադարձաւ անցած 20 տարիներու ընթացքին Հայաստանի կարեւոր ձեռքբերումներուն եւ յաջողութիւններուն, ներկայ մարտահրաւերներուն, հայ-եգիպտական համագործակցութեան խնդիրներուն, եւ նշեց եգիպտահայ համայնքի կարեւոր դերը երկու երկիրներու միջեւ բարեկամական յարաբերութիւնները աւելի ամրապնդելու ուղղութեամբ:

Ընդունելութեան ընթացքին ճարտարապետ Նայիրի Համբիկեան, հնագետ Հուրիկ Սուրուզեան եւ քանդակագործ Սարգիս Թոսունեան պարգևատրուեցան ՀՀ Մշակոյթի Նախարարի պատուոգիրերով՝ հայ մշակոյթի զարգացման եւ տարածման գործին մէջ անոնց ունեցած նշանակալից աւանդին համար:

Ընդունելութիւնը անցաւ ջերմ եւ հաճելի մթնոլորտի մը մէջ, անմոռանալի յուշ դարձնելով արդէն քսաներորդ անգամ ազգովին տօնուող այս կարեւոր իրադարձութիւնը՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տարեդարձը:

Կարեւոր տարեդարձ մը, որուն հետեւեալ նշանաբանը յիրաւի կ'արժէ յիշել եւ ամէն օր բարձրաձայնել.

- Հայաստանը ե՛ս եմ:
- Հայաստանը դո՛ւն ես:
- Հայաստանը մե՛նք ենք:

Շ.Մ.



Հայաստանի Անկախության 20-րդ Տարեդարձին Առթիւ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳ-ԱՀԸ «ՊԱՏՈՒՈՅ Ծ-ՔԱՆՇԱՆ»-ՈՎ ԿԸ ՊԱՐԳ-ԵՒԱՏՐԷ ՀԲԸՄ-Ի ՆԱԽԱԳ-ԱՀԸ



ՀԲԸՄ-ի նախագահ՝ Պերճ Սեդրակեան, Հայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսեանէ կը ստանայ «Պատուոյ Շքանշան»ը :

Ուրբաթ, 23 Սեպտեմբեր 2011-ին, Հայաստանի անկախության 20-րդ տարեդարձին առթիւ Նիւ-Եորքի մէջ տեղի ունեցած տօնակատարութեան ընթացքին, Հայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսեան «Պատուոյ Շքանշան» շնորհեց ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեանին Հայաստանի Հանրապետութեան մատուցած նշանակալից, բեղմնաւոր ծառայութիւններուն համար: Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն պատուանշաններէն մին նկատուող «Պատուոյ Շքանշան»ը յանձնուեցաւ պարգեւատրեալին, փառաշուք հանդիսութեան մը ընթացքին:

Սոյն տօնակատարութիւնը, որուն ներկայ եղած են աւելի քան 700 Նիւ-Եորքաբնակ հայեր, կազմակերպուած էր Միացեալ Նահանգներու հայկական դեսպանութեան, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մշտական ներկայացուցչութեան եւ ամերիկահայ կազմակերպութիւններու համագործակցութեամբ: «Պատուոյ Շքանշան» կը շնորհուի այն անհատներուն, որոնք նշանակալից ծառայութիւններ կը մատուցանեն «Պահպանելու համար Հայաստանի

Հանրապետութեան ազգային շահերը՝ որոնք կը ձգտին ժողովրդավարութեան եւ անկախութեան ամրապնդման»:

Իր բովանդակալից ուղերձին մէջ, նախագահ Սարգսեան յայտարարեց թէ Հայաստան բոլոր հայերուն հայրենիքն է, ուր որ ալ գտնուին անոնք: «Այս հրաշալի երկրին մէջ, միասնաբար պետք է վերանորոգենք մեր ուժերը, մեր յոյսն ու հաւատքը: Պետք է վերանորոգենք մեր ուխտը զոր, հազարամեակներու ընթացքին քիչեր դրժեցին եւ սակայն, շատեր հաւատարմօրէն պահպանեցին ու փառաւորեցին: Անոնք պայքարեցան, ստեղծեցին եւ դաստիարակեցին, խնամեցին եւ կառուցեցին, հատորներ գրեցին եւ վերծանեցին, բանտարկուեցան ու աքսորուեցան եւ սակայն, կենսունակ վերականգնեցան, զաւակներ կրթեցին եւ անոնց կտակեցին հնադարեան մեր ազգին հաւատարիմ մնալու ուխտը», - ըսաւ ան:

Հայ ղեկավարը անդրադարձաւ նաեւ այն եզական եւ սերտ յարաբերութեան, որ գոյութիւն ունի Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ: «Պատեհութիւններ ու-



Նեցած եմ նկատելու եւ հաստատելու թէ օրէ օր Հայաստան եւ Սփիւռք առաւել եւս կու գան ամբողջացնել զիրար», - ըսաւ ան: Այա յարեց. «Չենք կրնար մեր երագած հայրենիքը ունենալ՝ առանց Սփիւռքի մեր հայրենակիցներուն ջանքերուն եւ աջակցութեան: Նոյնպէս, կարելի չէ ունենալ կենսավառ Սփիւռք մը որ կը մնայ հայ, կը պահպանէ եւ կը զարգացնէ մեր անկողնայինները, որ հպարտ է իր ինքնութեամբ՝ առանց հաստատ, բարգաւաճ հայրենիքի մը որ այսօր իր դերն ու տեղը ունի աշխարհի մէջ»:

«Պատուոյ Շքանշան»ը Հայաստանի Հանրապետութեան կողմէ շնորհուած բարձրագոյն պատուանշաններէն մին է:

Նոյն երեկոյթին պարգևատրուեցաւ նաեւ ԶԲԸՄ-ի երկարամեայ անդամուհի՝ Ռիթա Պալեան, որ ստացաւ «Միխիթար Զերացի» շքանշանը՝ Հայ-Ամերիկեան Առողջապահական Կեդրոնին միջոցաւ իր մասնակցութիւնը բերած ըլլալուն

համար Հայաստանի առողջապահական ինստիտուտութեան զարգացման:

Նոյնպէս պարգևատրուեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ ԱՄՆ-ի Արեւելեան թեմի Առաջնորդ՝ Գերշ. Խաժակ Արք. Պարսամեան, որ ստացաւ «Հայրենիքին մատուցած ծառայութիւններուն համար» շքանշանը՝ առ ի երախտագիտութիւն Հայաստանի հանդէպ ցուցաբերած իր անսակարկ նուիրումին եւ մատուցած ազգանուէր գործունեութեանց:

«Միխիթար Գօշ» շքանշանը ստացան Ամերիկայի մէջ գործող երկու հայ դիւանագետներ՝ իրենց դիւանագիտական ձեռնհաս աշխատանքին առ ի գնահատութիւն: Առաջինը՝ ՄԱԿ-ի մօտ, Հայաստանի մշտական ներկայացուցիչ՝ Կարէն Նազարեան, իսկ երկրորդը՝ Միացեալ Նահանգներու Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ եւ Լիազօր դեսպան՝ Թաթուլ Մարգարեան:

Թրգմ. Ա.Ճ.

ՏԵԱՐ-Բ ՊԵՐՃ ԹԷՐԶԵԱՆ ԵՒ ՎԱՐԳ ԱԼԵ-ՔՍԱՆԵԱՆ ԿՐ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻՆ ՆԱԽԱԳ-ԱՀԱԿԱՆ ՄԵՏԱԼՆԵՐՈՎ

Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 20-ամեակի նշումը առիթ էր յետադարձ ակնարկ մը նետելով՝ գնահատելու անձնաւորութիւններ, որոնք զանազան ձեւերով նշանակալից ծառայութիւններ մատուցած էին նորանկախ հայրենիքի կայացման գործընթացին:

Գնահատանքի արժանի դարձած անձնաւորութիւններու կարգին են Գահիրէէն ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Տիար Պերճ Թերզեան, որ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ արժանացած է «Միխիթար Գօշ» մետալին եւ յայտնի գործարար Տիար Վարդ Ալեքսանեան, որ արժանացած է «Մովսէս Խորենացի» մետալին:

Կը շնորհաւորենք զոյգ պարգևատրեալները:

« S »



ՀԵՏԵՐԻՆԻ ԻՍՏՈՒՆ ԳԵՐՈՒՄ

الاتحاد الخيري الأرميني العام

FONDÉE EN 1938 AU CAIRE

المجلس الإقليمي لمصر

١٥ شارع محمد قنبر - القاهرة ١١١١١ - ت. ٥٩١٩٥٥ - ف. ٥٩١٩٥٦ - ب. ١٥٧١-١١١١١ - مصر

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ**

ԵԳԻՊՏՈՒ ՕՐԱՆԱՎԱՅՈՒՄԻ ԵՆԵՉՆԱԾՈՐԻՆ

15, Rue El Sakr - El-Dokki - Le Caire
Téléphone: 591555, Télécopieur: 591956
Boite postale: 1071-1111 Le Caire



**UNION GENERALE ARMENIENNE
DE BIENFAISANCE**

COMITÉ RÉGIONAL D'EGYPTE

15, IMAD EL-DIN - 11111 LE CAIRE
Tel. 591555, Fax 591956
B.P. 1071-1111 - LE CAIRE

Գահիրե, 30 Մեպտեմբեր 2011

Մեծայարգ Տիար Պերժ Մեղրակեան
Նախագահ ՀԲԸՄ-ի
Նիւ Եորք.

Մեծարգոյ Նախագահ,

Հաճոյքով տեղեկացանք թէ ՀՀ նախագահ Տիար Մերժ Սարգսեան անցեալ Մեպտեմբեր 23-ին Հայաստանի անկախութեան 20-րդ տարեդարձին առիթով, Նիւ Եորքի մէջ կայացած տօնակատարութեան ընթացքին, գնահատելով Հայաստանի Հանրապետութեան համար Ձեր մատուցած ակնառու ծառայութիւնները, Ձեզ պարգևատրած է ՀՀ-ի բարձրագոյն գնահատականը համարուող Պատուոյ Շքանշանով:

Այս ուրախ առիթով ստորագրեալս ինչպէս նաեւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի անդամները, իրենց և ՀԲԸՄ-ի Եգիպտոսի բոլոր կառոյցներու անունով, սրտանց կը շնորհատրեն Ձեզ, հայրենի պետութեան Գլխատրին կողմէ եղած այս արժանի պատիւին համար, նոյն ստեն մաղթելով Ձեր ազգանուէր և հայրենանուէր գործունէութեան մէջ նորանոր յաջողութիւններ:

Լաւագոյն զգացումներով

ՀԲԸՄ-ի

Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողով

Ատենապետ



AGBU

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ ՄՈՒԻՅՈՒՄ

55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. T: 212 319-6383 • F: 212 319-6507/08 • E: agbuny@agbu.org • W: www.agbu.org

21 Հոկտեմբեր 2011

Մեծայարգ
Ատենապետ Պրն. Պերճ Թերզեան
Եւ Յարգելի Վարչական Անդամներ Հ.Բ.Ը.Միութեան
Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի
Գահիրէ

Յարգելի Պրն. Թերզեան,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր 30 Սեպտեմբեր 2011 թուակիր շնորհատրական նամակը Հայաստանի Հանրապետութեան Նախագահին կողմէ ինձի շնորհուած Պատուոյ Շքանշանին առիթով:

Ձեր բարեկամական ջերմ եւ անկեղծ զգացումները մեծապէս գնահատելով կը փափաքիմ շեշտել, թէ շքանշանի պատիւը իմ անձիս միջոցաւ արժանատրապէս կը վերաբերի նաեւ մեր Մեծագոյն Միութեան, որուն ազգանուէր տեսլականով սահմանուած հայրենանուէր եւ եկեղեցանուէր գործունէութեան դաշտը եղած է իմ կեանքիս ու գործունէութեանս ուղին, հոգեկան բարձրագոյն գոհունակութեամբ վարձատրելով զիս:

Այս առթիւ սրտի մեծ գոհունակութեամբ ձեր բոլորին հետ կը բաժնեմ ինձի շնորհուած գնահատական շքանշանը, որ խոնարհաբար կ'ընդունիմ: Արդարեւ բազմահազար նուիրեալ միութենականներու հաւատարոյ ջանքերով իր կոչումը իրականացնող մեր Ընդհանուր Միութեան ղեկավարի պատասխանատուութիւնը ինձի համար առանձնաշնորհում եւ բարձրագոյն պատիւ կը սեպեմ:

Ձեր հայրենանուէր աշխոյժ գործունէութեան մէջ ձեզի կը մաղթեմ յարատեւ եռանդ եւ յաջողութիւն:

Յարգաբնէրով՝

Պերճ Սեդրակեան
Նախագահ

CENTRAL BOARD OF DIRECTORS:

PRESIDENT - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENT** - SINAN SINANIAN. **TREASURER** - SAM SIMONIAN. **SECRETARY** - BERGE PAPAZIAN.

HONORARY MEMBER - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.

MEMBERS - *United States*: M. MICHAEL ANSCOUR, CAROL HAGDASARIAN ASLANIAN, JOSEPH HASRAJIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH FESTEJIAN, ARDA HARATUNIAN, SARKIS JEBEJIAN, LEVON NAZARIAN, JOSEPH OUGHOURJIAN, DICKRAN YEVSEJIAN, YERANT ZORKAN. *Argentina*: RUBEN KEGHICHIAN. *France*: ARIS ATAMIAN. *Suisse/Canada*: WAHE GABRACHE. *Syria*: VASKEN YACOUBIAN.

COUNCIL OF TRUSTEES - SARKIS DEMIRJIAN, RICHARD MANOOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARNG YACOUBIAN.

IN MEMORIAM - BOGHOS NUBAR. *Founder*: ALEX MANOOGIAN, *Honorary Life President*.



ՈՒՆԿՆԴԻՐ ՍՐՏԵՐ ՆՈՒԱՃՈՂԸ՝ ԱՐՄԷՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ստորև Հայաստանի Անկախության 20-ամեակին առթիւ Գահիրէի Ազգային Իշխանութեան կազմակերպութեամբ Գահիրէի Կոմիտէյա թատերասրահին մէջ կայացած համերգին մասին անդրադարձ՝ Սօ. Սիիրան Ղազէլեանի դիպուկ գրիչով:

«Տ»

Մարդկային նուաճումները տարբեր կ'ըլլան իրենց թէ՛ ասպարեզով, թէ՛ տեսակով եւ թէ՛ ծաւալով, թէ՛ հետեւանքներով: Նուաճումներ գիտութեան մէջ, նուաճումներ արուեստի բնագաւառին մէջ, նուաճումներ մտքի թռիչքներով, նուաճումներ երկիրներու, նուաճումներ սեփական տկարութիւններու նկատմամբ, նուաճումներ բարոյական գետնի վրայ եւ այլն: Եւ անկասկած իւրաքանչիւրն ունի իր անփոխարինելի եւ անզնահատելի արժէքը:

Բայց սիրտերու նուաճումը, այն ալ արուեստի միջոցով, ամենասրտայոյզ արուեստի՝ երգի միջոցով. ահա այս է հայ երգարուեստի մէջ Արսէն Գրիգորեանի գրեթէ երկու տասնամեակի վրայ տարածուող յաղթական նուաճումը: Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր արտիստի համար Նեղոսի ափերուն Հոկտեմբեր 6-ի համերգային գիշերը թերեւս եղաւ հերթական նուաճումը, իսկ մենք՝ երախտապարտ նուաճուածներս՝ Գահիրէի «Կոմիտէյա» սրահ համախմբուած հայատրոփ սիրտերը, այդ երեկոյ եւ յետայդու եղան առաւել հայրենաբաբախ, առաւել սիրայորդ, եւ իրենց ինքնութեամբ առաւել հպարտ:

Եւ ինչպէս չիշել թէքէեանական հանճարեղ քերթուածի հանճարեղ տողը. «...այսուհետեւ օդի, ջուրի, հացի նման մենք պէտք ունինք հպարտութեան»:

Ինքնաճանաչումէ բխող արժանապատիւ հպարտութեան այդ զգացումն էր, որ մեր սրտերէն երգ առ երգ պեղեց, արծարծեց ու յորդեցուց Արսէն Գրիգորեան. հպարտութիւն՝ հայ ժողովրդական երգի հանդէպ,

հայրենի մշակութային ժառանգութեան հանդէպ, մեր ինքնութեան հանդէպ, մեր մեծ գործիչներուն հանդէպ, մեր ազգային հերոսներուն հանդէպ:

Աչքերուս առջեւ այսօր ալ կը տողանցեն այն երբեք չխամրող պատկերները, երբ, ասկէ 23 տարի առաջ, Ղարաբաղեան Շարժման արշալոյսին, Հայաստանի ամբողջ բնակչութիւնն իր ճակատագիրը իր ձեռքը վերցնելու վճռականութեամբ փողոց դուրս եկաւ: Ամենքը, թօթափած որիդային 70-ամեայ վախի կապանքները, Արցախ Աշխարհը Հայաստանի հետ վերամիաւորելու եւ արդարութեան վերականգնումի պահանջով, իրենց համարձակութեամբ, վճռականութեամբ ու աներեր կամքով խորհրդային ամբողջատիրութեան հիմքերը կը սասանէին (փոյթ չէ թէ հետագային այդ «դափնիները» այլոց բաժին հասան...): Յաջաժամանակի իշխանութեան, ընդվզող իւրաքանչիւր անհատ, կառոյց կամ հաստատութիւն անհնազանդութեան օճախ մըն էր, մինչդեռ իրականութեան մէջ անոնք ապագայ անկախութիւնը դարբնող սուրբ ըմբոստութիւնները անձնաւորողներն էին: Եւ այդ ըմբոստութեանց իւրաքանչիւր մասնակից իր չափով ներդրումի լուծայ ունի երեք տարի յետոյ գալիք անկախութեան հիմքերուն մէջ, այն անկախութեան, որուն 20-ամեակը կը տօնախմբէ այս տարի համայն հայութիւնը, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի ամբողջ տարածքին, հպարտ հանդիսաւորութեամբ եւ երազանքը իրականութեան վերածողի անհուն ուրախութեամբ:

Ահա այդ 88-եան բախտորոշ օրերուն էր, որ Հայաստան նոր ոտք դրած 20-ամեայ սփիւռքահայ ուսանող Արսէն Գրիգորեան, իր շուրջ հաւաքած Կոմիտասի անուան երաժշտանոցի դասադուլաւոր ուսանող բազմութիւններ, ազգային-հայրենասիրական երգերու իր կատարումներով ոգի կը ներարկէր արթուն, արթնցող եւ տակաւին կարկամող սիրտերուն... Եւ նորէն ոգիի ծննդավայրը սիրտն էր, ճամբան՝ սիրտը, եւ



նպատակակետը՝ սիրտը, իսկ միջոցը՝ կրկին երգը, հայ երգը, հայ տոհմիկ երգը: Եւ ինչպէս երբեմնի 88-ի հայաստանեան այդ թեժ օրերուն, այնպէս ալ եգիպտոսեան այսօրուան թեժ օրերուն եգիպտական իսկ բեմէն համերգային իր անդրանիկ երգի ու անդրանիկ ուղերձի՝ «Արամի Երգի» բառերով ան կը պատգամեր:

Հայրենեաց դրօշակներ
Մեզ հանին Սասնոյ լեռներ,
Շուն թուրքին դէմ կռուելու,
Հայրենիքն ազատելու:

Ես Արամն եմ, քաջ Արամ,
Ինձ տանում են կախաղան,
Կախաղանէն պիտ' գոռամ,
Կեցցէ անկախ Հայաստան»:

Գահիրէի մէջ Արսէն Գրիգորեանի այս բացառիկ համերգը մեր համայնքին համար կազմակերպուած ընթացիկ տարուան մէջ արդէն գեղարուեստական 2-րդ ձեռնարկն է՝ (առաջինը հայ երգի մէկ ուրիշ անզուգական մեկնաբան Գեորգ Յաճեանի **դասական** համերգն էր «Պըլըքտանեան» հանդիսարահին մէջ՝ նուիրուած հայոց ցեղասպանութեան 96-րդ տարելիցին) կազմակերպուած Գահիրէի Ազգային Իշխանութեան եւ հովանաւորուած Թեմի բարեխնամ Առաջնորդի՝ Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի կողմէ: Եւ անելի դիպուկ ինչպէ՞ս, քան «Ողջոյն Տուր Միմեանց»-ի սկզբունքով այդ օր մեզի առիթը տրուեցաւ երգարուեստով բաժնեկցիլ միմեանց հետ, համայնքի իւրաքանչիւր անդամի հետ մեր բոլորի հպարտութիւն եւ աչքի լոյս՝ Հայաստանի անկախութեան 20-ամեակի ուրախութիւնը:

Յանուն Ազգային Իշխանութեան երեկոյթի բացումը կատարեց Գահիրէի Թեմական Ժողովի անդամ՝ տիար Շանթ Կապէյեան՝ նախ վեր առնելով օրուան՝ անկախութեան 20-ամեակի խորհուրդը, եւ ապա ներկայացնելով Արսէն Գրիգորեան երգիչը, անոր ստեղծագործական անցած ուղին, իրեն ընկերակցող «Մրօ» նորաստեղծ նուագախումբն ու երիտասարդ երգչուհի Աննա Խառատեանը եւ ապա բեմ հրաւիրեց արուեստագետները:

Համերգը սկսաւ նուագախումբի

խրոխտ, հայաշունչ նախանուագով, որուն աւարտի զգաստացնող լռութեան մէջ հնչեցին Արսէն Գրիգորեանի «Արամի Երգի» սրտայոյզ ելեւէջները, միայնակ՝ առանց նուագակցութեան: Նախաճաշակի այս խոստումնալից մուտքով արդէն յստակ էր ներկայ հասարակութեան համար, որ այդ երեկոյ համերգասրահի կամարներուն տակ կը սպասուէր հայ ազգային երգի աննախադեպ հրավառութիւն:

Երգիչը հանդիսատեսի մէջ երգ առ երգ երաժշտարուեստի առթած աճող ոգեւորութիւնն ու հայրենասիրութեան ինքնամաքրումի անթեղուած կրակը ոչ միայն համերգի ամբողջ ընթացքին շարունակ անելի ու անելի բորբոքեց, այլ ստանձնելով միաժամանակ թէ՛ համերգավարի եւ թէ՛ պատգամախօսի պարտականութիւններ, իր անբռնազբօս, անմիջական ու ոգեշունչ խօսքով՝ առաւելագոյնս մատչելի դարձուց երեկոյթի ոգին:

Այնուհետեւ յաջորդաբար երգարուեստի թելերով մեր առջեւ յառնեցան «Անդրանիկ»ը՝ ազգը բռունցքող իր պատկառելի ամբողջական կերպարանքով, «Սիրուս Կը Սպասեմ»ը իր կարօտամորմոք անկեղծութեամբ, «Խորոտ Եար Ջան»ը ու «Նարե Եար»ը իրենց անպաճոյճ պարզութեամբ, նորափթիթ սիրով ու խորոտութեամբ: Արսէն Գրիգորեան պարզեց նաեւ իր երաժշտական իւրօրինակ նախագիծ-մտայղացումներն մին, այն է. իր համերգային երգացանկի ժողովրդական երգերով «գծել» ամբողջական Հայաստանի քարտեզը...

Եւ կրկին խոր լռութիւն ու լռութեան մեջէն կանացի պարզ ու սրտահաղորդ ձայն մը, որ դիցուհու վեհութեամբ ապրեցաւ ու ապրեցուց Կոմիտասեան «Կանչէ Կռունկ»ը, այնպէ՛ս զուսպ, այնպէ՛ս նազանքով: Ձայներանգով եւ կատարողական ոճով խորապէս ժողովրդական այդ երիտասարդ երգչուհին, Արսէն Գրիգորեանի աշակերտ՝ Աննա Խառատեանն էր: Աննայի մեներգը շուտով վերածուեցաւ Արսէնի հետ զուգերգի՝ «Հալել Եմ»-ի ելեւէջներով: Որմէ յետոյ կրկին ասպարեզը Արսէնինն էր. յաջորդեցին Հաւասիի հանրայայտ «Եարը Մարդու Եարա Կու Տայ» երգի Գաթրճեանական մշակումը, Արսէնի հեղինակած «Մարաշի Աղջի»ն եւ Խաչատուր Աւետիսեանի «Երբ



Խանդում Ես» քնարական երգը: Արսեն Գրիգորեանի երգեցողութիւնը գեղարուեստական ընկալման տեսակետէ շատ ասելի համոզիչ կը դառնար ոչ միայն ժողովրդական երգին պատշաճող իր ձայնի ու մեկնաբանութիւններու հարազատութեան, այլ նաեւ իր կատարումները ազգագրական պարի տարրերով համեմելու շնորհիւ: Առաջին բաժինը եզրափակուեցաւ «Յամբարձման Անուշ Գիշեր»ով, որ խանդավառութիւնը հասցնելով բնական «վարարումի»՝ առաւել անմիջական ու համարձակ հանդիսատեսին հանեց մեներգիչին հետ հայկական ոգեշնչող շուրջպարի:



Իրերայաջորդ պարային ու քնարական, սրտայոյզ ու յաղթական երգերը Արսեն Գրիգորեան մեկը միւսին կը շաղկապէր մերթ նուագախումբն ու երգչուհին ներկայացնելով, մերթ հայրենասերի իր ապրումներն ու զգացումները փոխանցելով ունկնդրին, մերթ նուրբ ու մտերմիկ կատակով մը եւ մերթ շոյող հաճոյախօսութեամբ՝ շարունակ իր ձեռքերուն մէջ պահելով հանդիսատեսի գեղարուեստական ընկալման զարկերակը:

Այդպիսի պահու մըն էր, երբ ան բացայայտեց «Մրրօ» նուագախումբի ստեղծման շարժառիթը՝ որն է... Գահիրէ համերգային այցելութիւնը, իսկ խումբի ստեղծման գլխաւոր խթանը՝... Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան եւ այս ամէնը Հայաստանի անկախութեան 20-ամեակին... Հանդիսատեսին ուրիշ բան չէր մնար, քան իր գլխաւոր հրետանիով՝ ծափողջոյններով արժանիօրէն քաջալերել գիրենք: Եւ իսկապէս համերգի յաջողութեան մէջ իր անթաքոյց վաստակը ունէր «Մրրօ»ն՝ կազմուած հետեւեալ

եօթը կատարողներէն.

ԱՐԹՈՒՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ՝ ստեղնաշարաւոր

ՏԻԳՐԱՆ ՉԱԲԱՐԵԱՆ՝ դուդուկ, զուռնայ, շուի

ՄԻՔԱՅԷԼ ՈՍԿԱՆԵԱՆ՝ թառ

ՎԱՐԴԱՆ ԳԱԲՈՅԵԱՆ՝ սոլօ կիթառ

ԳՈՒՐԳԷՆ ՂԱԶԱՐԵԱՆ՝ պաս կիթառ

ՄՈՎՍԵՍ ՂԱԶԱՐԵԱՆ՝ հարուածային

ԱԼԲԵՐՏ ՕՐԴԻՆԵԱՆ՝ տիոլ



Բոլորն ալ առաջնակարգ երաժիշտներ, որոնք հակառակ իրենց փոքրաթիւ կազմին, մեծ նուագախումբի հնչեղութիւն կ'ապահովէին:

Այստեղ հարկ է դրուատանքով նկատել, որ Արսեն Գրիգորեան, որպէս իր կատարումներուն նաեւ նուագախմբային «հանդերձանքի» գեղարուեստական պատասխանատուն, կրցած էր ժողովրդական ու ժամանակակից նուագարաններու այնպիսի համադրում մը գտնել, ուր մշտապէս առկայ էին ժողովրդական նուագարաններու բնական ու հարազատ հնչողութիւնը՝ յագեցած ժամանակակից հարուածային ու էլեկտրոնիկ նուագարաններու հնարաւորութիւններով: Նոյն յաջողութեամբ ան կրցած էր ազգային, դասական ու ժամանակակից հարմոնիկ լեզուի ու արտայայտչամիջոցներու այնպիսի ներդաշնակութիւն մը գործածել, որ ոչ միայն չէր խաթարէր ժողովրդական երգի համն ու հոտը, այլ ընդհակառակը, կ'ընդգծէր ու կը բազմապատկէր անոր ներգործօն ոյժը: Եւ այս սկզբունքները հիանալիօրէն փոխլրացնելով իրար՝ իրենց գրաւիչ հնչողութեամբ ազգային երգի տիրոյթին մէջ կը պահէին տարբեր սերունդներու պատկանող ու բազմաճաշ-



ակ հանդիսատեսը՝ հաւասարապէս:

Ահա այստեղ է, որ չենք կրնար, գոնէ հակիրճ, չանդրադառնալ Արսէն Գրիգորեան մարդու, երգչի եւ արուեստագետի ձեւաւորմանն ու անցած ճանապարհին՝ մէջբերելով կենսագրական որոշ տուեալներ:

«Ճնած է 1968 թուականի Դեկտեմբերի 7-ին, Սուրիոյ հետ Արեւմտեան Զայաստանի սահմանագծին գտնուող Ղամիշլի քաղաքին մէջ, սասունցիներու յարկի տակ:

1987-ին ան կը վերադառնայ Զայաստան (վերադարձ բառը միակ ընդունելի բառն է իրեն համար՝ հայրենահանուածի ժառանգի համար) եւ կ'ընդունուի Կոմիտասի անուան երաժշտանոց՝ Յովհաննէս Բաղալեանի դասարան, զոր կ'աւարտէ գերագանց յիշատակութեամբ՝ ստանալով «Արուեստի Վարպետ» որակաւորումը 1993-ին, իսկ ասպիրանտուրան՝ Մագիստրոսի կոչումով, 1998-ին:

Ան, ուսման զուգահեռ, մաս կը կազմէ «Ակունք» ազգագրական երգի-պարի համոյթին՝ աշակերտելով Զայրիկ Մուրադեանին:

Ելոյթներ կ'ունենայ Զայաստանի եւ Արցախի բոլոր մարզերուն մէջ, ինչպէս նաեւ արտասահմանեան շարք մը երկիրներու եւ քաղաքներու, ինչպէս՝ Մոսկուա, Սանթթֆեթերսպուրկ, Սուրիա, Ռիկա, Թիֆլիս, Պէյրութ, Պարսկաստան, Յունաստան եւ այլն:

Ունի տեսահոլովակներ «Խիօ-Խանէ», «Յով Գիշեր, Չով Գիշեր», «Եարը Մարդու Եարա Կու Տայ», «Մէջս Կեանք Չմնաց» երգերուն հիման վրայ:

2001 թուականին կ'արժանանայ Ամենայն Զայոց Զայրապետ Գարեգին Բ.-ի գիրգնահատանքին:

2004 թուականին կը հիմնէ «Զայ Երգասաններ» մեներգիչներէ կազմուած խումբը եւ կը կատարէ համերգային ընդարձակ գործունէութիւն ոչ միայն Զայաստանի մէջ, այլեւ արտասահման՝ Շուէտ, Լիբանան, Ուքրաինա, ԱՄՆ, Լատին Ամերիկա եւ այլն:

2004 թուականին ԶԶ նախագահի հրա-

մանով Արսէն Գրիգորեանին կը շնորհուի Զայաստանի Զանրապետութեան քաղաքացիութիւն եւ անձնագիր:

2008-ին կ'արժանանայ «Տարուայ Լաւագոյն Ժողովրդական Երգիչ» կոչման:

2008 թուականին երգչին կը շնորհուի ԶԶ «Վաստակաւոր Արտիստի» կոչում:

2009-ին ԶԶ պաշտպանութեան նախարար Սեյրան Օհանեանի հրամանով կը պարգեւատրուի «Գարեգին Նժդեհ» մետալով:

2011 թուականի Մայիսի 9-ին կը պարգեւատրուի «Վարդան Մամիկոնեան» պատուոյ յուշամետալով:

Արսէն Գրիգորեան կատարողականի կողքին կը զբաղի նաեւ մանկավարժական գործունէութեամբ՝ դասաւանդելով ժողովրդական երգեցողութիւն ու պատրաստելով հայ երգի երիտասարդ կատարողներ»:

Եւ այսպէս, երգչի մասնագիտական կրթութիւն ստացած ժողովրդական երգի անզուգական մեկնաբան Յովհաննէս Բաղալեանին աշակերտած, ազգագրական երգի նահապետ Զայրիկ Մուրադեանի շունչին տակ եւ «Ակունք» երգի-պարի համոյթի կազմին մէջ ազգագրական երգի ու ազգագրական պարի իր տարիներու մասնակցութեան փորձառութեամբ, երկու տասնամեակ հայ երգը ինքնուրոյն ներկայացնելու կատարողական ու ստեղծագործական գործունէութեան պաշարով էր, որ Արսէն Գրիգորեան ժամանած էր Գահիրէ: Ան ժամանած էր հայ երգի իր կատարումներով վերստին լիցքաւորելու մեզ. հայ երգ, որ ազգային ինքնագիտակցութիւն կը ներարկէ իւրաքանչիւրին. ազգային ինքնագիտակցութիւն, որ հայ մարդուն ոգի կու տայ. հայ մարդ, որուն սիրտը հայօրէն կ'երգէ բազկերակի ամէն զարկի հետ:

Եւ այդ բազկերակի մէջ արեան «հայաբար» հոսքի ու ճնշման գեղարուեստական կարգաւորումը դարձեալ իր ձեռքը կ'առնէր Արսէն Գրիգորեան՝ սկսելով համերգի երկրորդ բաժինը: Այս մասին մէջ երգացանկի երգերուն մեծամասնութիւնը ոչ թէ «անհե-



© Ohen Janikian



դիսակ» ժողովրդական երգերն էին, այլ գուսանական եւ աշուղական երգեր եւ կամ ժողովրդական ոճով գրուած երգահանական գործեր:

Բեմ-հանդիսասրահ «անջրպետը» ի սկզբանէ կոտրած արուեստագետը, երգով ու խօսքով կը դիմէր ժողովուրդին եւ կը ստանար անոր ջերմ ու անմիջական արձագանգը: Այդպէս եղաւ նաեւ, երբ ավարտելով «Յայի Տունը» երգը, ան յիշեցուց հանդիսատեսին հայու տուն գաղափարին առջեւ իր ու բոլորիս ժառանգած խոնարհումը, այն հայու տան, ուր կը թեւածէ հայեցի ոգին, «որովհետեւ հայը ինքնին ոգի է եւ չկայ հայ առանց ոգիի». եւ վերջապէս խոնարհում ակնածանք յատկապէս հայու այն մեծ տան, այն ընդհանրական տան, որ մենք **ՅԱՅՐԵՆԻՔ** կը կոչենք:

Այնուհետեւ անցում կատարելով աշուղական ու սիրային երգերուն երգիչը հնչեցուց Շերամեան սիրուած երգերէն «Մէջս Կեանք Չմնաց»-ը՝ կատարման ընթացքին յաջողելով իրեն ձայնակից դարձնել երաժշտասեր հանդիսատեսը: Երկուստեք՝ կատարող-ունկնդիր զոյգին համար որքան հաճելի է եւ յաւելեալ մտերմութիւն ստեղծող, երբ կարծես թէ կրաւորական դերի համար սահմանուած կողմը՝ հանդիսատեսը, հիմնուելով իր երաժշտական փորձառութեան վրայ եւ քաջալերուելով կատարողի հրաւերէն, բնականօրէն մասնակից կը դառնայ «բեմական գործողութիւններուն»:

Արդէն կարգը եկած էր «Մրրօ» երգին, անուանում մը, որ Արսէն Գրիգորեանի համար հարազատ է եւ արդէն ունի «ապրանքանիշի» (Brand) արժէք: Նախ, Մրրօն Արսէնի բեմական անունն է, երկրորդ, «Մրրօ»ն այն կազմակերպութեան անունն է, որ կը զբաղի Հայաստանի մէջ երաժշտական ազգային արուեստի համակարգի ստեղծմամբ ու ազգային երգի պահպանման կարեւորագոյն գործով, եւ վերջապէս՝ «Մրրօն» օրուայ նորաստեղծ նուագախումբն է...

«Մրրօ» երգին յաջորդեց Հենրիկ Անասեանի «Երագ Աղջիկ» տրամատիկ սիրերգը եւ ապա երգիչը, անդրադառնալով իր սիրելի ուսուցիչներէն Հայրիկ Սուրադեանին եւ անոր երգացանկին, հնչեցուց «ազգագրական երգի հայրիկէն» սորված երգերէն մին՝ «Ես Վերու Եղնիկ Եմ»-ը՝ ձայնին տալով

Հայրիկ Սուրադեանական հնչերանգ:

Այնուհետեւ կրկին բեմը տրամադրուեցաւ Աննա Խառատեանին, որ իրեն յատուկ յուզականութեամբ կատարեց Խաչատուր Աւետիսեանի «Տաղ Յայտնութեան» երգը: Յաջորդեց երկու մասէ բաղկացած «Ախ, Մայրամ» երգը՝ Արսէնի կատարմամբ. երգի առաջին՝ դանդաղ մասը ավանդական-ժողովրդական է, իսկ երկրորդ՝ արագ մասը կը պատկանի Աշուղ Սասունցիին: Արսէն Գրիգորեան, ալ ավելի սրելով զգացումներու խտացումը, կատարեց Հայրիկ Ղազարեանի «Հայոց Աղունակ» կարօտի երգն ու Ջիւանիի «Հայրենիքիս Ջուրը», եւ շատ դիպուկ մեկնաբանելով ըսաւ. «Եթէ կարօտը հայի սիրտէն հանես, կը դադրի ան հայ ըլլալէ. կարօտ՝ սեփական ինքնութեան, կարօտ՝ մեզմէ խլուած հայրենիքին, կարօտ՝ մեր արմատներուն նկատմամբ»:

Եւ դարձեալ բեմը Աննային էր. ան յուզական անկեղծութեամբ հնչեցուց Գուսան Շահէնի «Իմ Անուշիկ Եար»ը, եւ ապա որպէս հնչողական հակադրութիւն փայլեցաւ հանդիսասրահի կամարներուն տակ Նժդեհի «շողշողացող» սուրը՝ Արսէն Գրիգորեանի «Արագի Ափին» երգի հնչիւններով: Ան որոտընդոստ ծափեր կորզելով ավարտեց երգը, բայց գաղափարը՝ ոչ. «Կեցցեն մեր հերոսները եւ մենք թող արժանի լինենք անոնց թափած արեան»: Եւ ապա յիշելով Աշոտ Սրբազանի խօսքերը յաւելեց. «Մենք ընտրեալ ազգ ենք, որովհետեւ գիտենք սիրել մեր մեծերը, գիտենք սիրել զիրար, գիտենք սիրել հենց մեզ, որովհետեւ մենք հայ ենք»:

Ունկնդիր սրտերը մէկ անգամ ընդմիջտ նուաճած Արսէն Գրիգորեան բացառիկ խանդավառութիւն եւ հայրենասիրական ոգիի յորձանք յառաջացուցած հայ տոհմիկ երգի յաղթերթը եզրափակեց Սուրադ Մշեցիի «Արծիւ Սլացիր» երգով՝ իւրաքանչիւրիս սրտին մէջ վերստին ծնունդ տալով այն հզօր ու անպարտելի արծիւին, որ իր ոգիի սլացքի անմեկնելի կորովը կ'առնէ միայն եթէ սևանի **հայրենի աղբիւրէն**:

Միհրան Ղազէլեան



Տպագրութեան Նուիրում ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԱՂԵ-ՔՍԱՆԴՐԻՈՅ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Երեքշաբթի, 27 Սեպտեմբեր 2011-ին, Աղեքսանդրիոյ Գրադարանին մէջ տեղի ունեցաւ տպագրութեան ու հրատարակութեան նուիրում միջազգային գիտաժողովներու շարքին չորրորդը՝ «Մերձաւոր Արեւելքի Երկիրներուն Մէջ Ու Անոնց Լեզուներով Տպագրութեան Եւ Հրատարակութեան Պատմութիւնը» թեմայով:



Գիտաժողովին մասնակցեցան 75 մասնագետներ՝ 20 երկիրներէ. Եգիպտոսէն, Հայաստանէն, ԱՄՆ-էն, Ֆրանսայէն, Հունաստանէն, Մեծ Բրիտանիայէն, Գերմանիայէն, Գանատայէն, Իտալիայէն, Յորդանանէն, Լիբանանէն, Մարոքէն, Թուրքիայէն եւ այլ երկիրներէ:

Նկատի ունենալով որ հայ գրատպութեան 500-ամեակին առթիւ Երեւանը Եունեսքօի կողմէ հռչակուած է «Գիրքի 2012-ի Համաշխարհային Մայրաքաղաք» (նշենք որ, Երեւանը այդ կոչումին արժանացած 12-րդ քաղաքն է), Հայաստանին պատուաւոր հիւրի յատուկ կարգավիճակ տրուած էր գիտաժողովի ծիրէն ներս: Ու թէեւ գիտաժողովը միջազգային բնոյթ ունէր, սակայն բեմին վրայ եգիպտական դրօշակին քով մասնակից երկիրներէն միայն Հայաստանի դրօշակը դրուած էր:

Գիտաժողովի հանդիսաւոր բացումը կատարեցին Աղեքսանդրիոյ գրադարանի տնօրէն Իսմայիլ Սերակէլտտին, Եգիպտոսի մէջ ՀՀ Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան եւ տպագրութեան ու հրատարակութեան նուիրում միջազգային գիտաժողովներու շարքին հիմնադիր, մատենագետ, փրոֆեսոր Ճէֆրի Ռոպերթս:

Յատկանշական է, որ Իսմայիլ Սերակէլտտին իր ելոյթին զգալի մասը նուիրած էր Հայաստանի անցած պատմական ուղիին, հայեգիպտական ջերմ, աւանդական կապերուն: Ան զուգահեռներ կատարեց Հայաստանի եւ Եգիպտոսի պատմութեան որոշ ժամանակաշրջաններուն միջեւ, մասնաւորաբար ընդգծելով այն մեծ դերը, զոր հայերը ունեցած են Եգիպտոսի մէջ տպագրութեան զարգացման ուղղութեամբ: Ան նաեւ արժեւորեց աշխարհասփիւռ

հայերու նշանակալից ներդրումը՝ իրենց բնակած երկիրներու գիտամշակութային կեանքին մէջ:

Դեսպան Ա. Մելքոնեան իր ելոյթին մէջ նախ ՀՀ Մշակոյթի Նախարարութեան անունով շնորհակալութիւն յայտնեց գիտաժողովի կազմակերպիչներուն՝ հայկական թեմային կեդրոնական տեղ յատկացուելուն համար, ապա անդրադարձաւ՝ հայատառ տպագրութեան 500-ամեակին եւ Երեւանը գիրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակուելուն առիթով նախատեսուող ծաւալուն աշխատանքներուն:

Գիտաժողովի առաջին երկու նիստերը ամբողջովին նուիրուած էին հայկական տպագրութեան պատմութեան:

Առաջին նիստին նախագահեց դեսպան Աշոտ Մելքոնեան: Չեկոյցներով հանդէս եկան Ե. Չարենցի Գրականութեան ու Արուեստի Թանգարանի տնօրէն՝ Կ. Վարդանեան, «Գրանշան» տառատեսակներու միջազգային մրցոյթի կազմկոմիտէի համանախագահ՝ Է. Ղաբուզեան, Մատենադարանի գիտաշխատող՝ Դ. Ղազարեան, եգիպտացի անուանի հայագետ - ցեղասպանագետ՝ Տոքթ. Մոհամետ Ռիֆաաթ Էլ Իմամ եւ Աղեքսանդրիոյ Գրադարանի գիտաշխատող՝ Տոքթ. Մուսթաֆա Էլ Ռազզազ: Երկրորդ նիստի ընթացքին հայկական թեմայով ելոյթ ունեցան եգիպտահայ Տոքթ. Սուրէն Պայրամեան եւ քաւի մը ուրիշ եգիպտացի գիտնականներ:

Տեղեկացնենք որ, գիտաժողովի ծիրէն ներս կազմակերպուած էր նաեւ հայկական հնատիպ գիրքերու բնօրինակներու ցուցահանդէս: Ներկայացուած էին՝ Մովսէս Բաղդամեանի «Նոր Տետրակ Որ Կոչի Յորդորակ» (Մատրաս, 1772թ.), 1666թ. Ամսթերտամ տպագրուած «Աստուածաշունչ» մը, Եփրեմ Խուրի Ասորիի «Գիրք Աղօթից» (1793-95թթ., Կ. Պոլիս), 1763թ. Վենետիկի մէջ տպագրուած Գրիգոր Նարեկացիի «Բանք Աղօթից» եւ այլ արժեքաւոր ու բացառիկ հրատարակութիւններ:

Շ.Մ.



ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃԵԱՆԻ

«ԿԱՐԻՆԷ» ՕՓԵՐԷԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ՝

ԳԱՀԻՐԷԻ ՀՐԸՄ-Ի ՀՆԼԻՈՊՈՒՍՈՅ

ՉԱԳՐՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

Շաբաթ, 1 Յուլի 2011-ի երեկոյան ժամը 8.30-ին, Գահիրեի ՅՐԸՄ-ի Չագըր Մշակութային Կեդրոնին մէջ, ցուցադրուեցաւ Տիգրան Չուխաճեանի «Կարինէ» օփերէին՝ Ժիրայր Բաբազեանի տարբերակին խտասալիկը (DVD-ն): Մօտ 40 հոգի փութացած էին ըմբռնելու Չուխաճեանի այս ստեղծագործութիւնը, ինչպէս նաեւ գնահատելու՝ Բաբազեանի տարած ծանր, դժուարին աշխատանքը՝ վերստին լոյս ընծայելու մոռացութեան մատնուած հայկական դասական այս հոյակապ գործը:

Երեկոյթին բացումը կատարեց Փարիզի «Տիգրան Չուխաճեան Ուսումնասիրութեան Կեդրոն»ի գեղարուեստական ղեկավար՝ Ժիրայր Բաբազեան: Ան ներկայացուց այն դժուարութիւնները, զորոնք դիմագրաւած էր հասնելու համար գեղարուեստական այս մեծ գործին ներկայացման:

Չուխաճեանի «Կարինէ» օփերէթը իր բնագրին մէջ կը կոչուէր «Լեպլեպիճի Զօրհօր Աղա»: Ան գրուած էր 1875-ին, թրքերէնով եւ շուտով արձանագրած՝ բացառիկ յաջողութիւն: Չաւեշտական այս օփերէթին յօրինումին համար Չուխաճեան ներշնչուած է իր ժամանակի քաղաքային եւ ժողովրդական երգերէն: Դէպքը տեղի կ'ունենայ 18-րդ դարուն, իշխան Խորշիտ Պէյի հարեմին մէջ: Իշխանը կը սիրահարուի երիտասարդ Նազելի Ֆաթիմէին, որուն հայրը՝ Զօրհօր Աղան «Լեպլեպի»ի խեղճ վաճառորդ մըն է: Ըստ իրեն, աղջիկը առեւանգուած է եւ կ'ուզէ փրկել զայն: Սակայն իրողութեան մէջ, աղջիկն ալ կը սիրէ Խորշիտը:

Չուխաճեանի ողջութեան, այս օփերէթը թարգմանուած է հայերէնի, իսկ 20-րդ դարուն՝ յունարէնի եւ գերմաներէնի: 1940 թուականին, Սովետական Յայաստանի մէջ, ան ներկայացուած է «Կարինէ» նոր խորագրին տակ: 1967-ին հայերէն տարբերակէն պատրաստուած է շարժանկար մը: Դէպքը միշտ տեղի կ'ունենայ Պոլսոյ մէջ, սակայն պատ-

մութիւնը փոփոխութեան ենթարկուած է:

Թէեւ Չուխաճեանի բնագիրը կորսուած է, սակայն Բաբազեան՝ Փարիզի մէջ, յայտնաբերած է ֆրանսերէն թարգմանութիւն մը որ նախատեսուած էր ֆրանսական արտադրութեան համար, որ երբեք չէր իրագործուած: Այս յայտնաբերումէն վերջ, բազմաթիւ պրպտումներ կատարելով, Բաբազեան կարողացած է զանազան տարբերակները օգտագործելով, կազմել իր ուրոյն արեւմտահայերէն գրութիւնը: Ան աղքատ վաճառորդ իր կերպարը փոխած է հարուստ վաճառականի մը եւ նիւթը աւելի կենսունակ ու աշխոյժ դարձնելու նպատակով, փոխած է նաեւ սիրոյ պատմութեան զարգացումը: Այստեղ, Կարինէ աստիճանաբար կը սկսի սիրել երիտասարդ մտաւորական Արմենը, որ Վենետիկի մէջ իր ուսումը աւարտելէ յետոյ վերադարձած է Պոլիս եւ հիմնած՝ իր անձնական թատերախումբը, որուն ինք եւս մաս կը կազմէ:

Արեւմտահայերէնով նոր տարբերակ մը ստեղծելէ վերջ, վերատեսութեան ենթարկուած նոր թատերգութեամբ մը, Բաբազեան օփերէթը կը թարգմանէ ֆրանսերէնի եւ անգլերէնի: Այս տարուան սկիզբները ֆրանսերէն տարբերակը բեմադրուած է Փարիզի եւ Մարսելի մէջ, 40 հոգինոց թատերախումբով մը (ներառեալ Ժիրայր Բաբազեանը իր՝ Զօրհօր աղայի դերով), որ կ'ըզգրկէր բարձր մակարդակի դերասաններ, երգիչներ, պարողներ եւ նուագածուներ:

Գահիրեի ՅՐԸՄ-ի Չագըր Մշակութային Կեդրոնին մէջ, երկու ժամ տևողութեամբ տեսերիզի ցուցադրութեամբ ներկայացուած «Կարինէ»ն, ֆրանսերէն տարբերակն էր, հայերէն ենթախորագրով:

Դադարին տեղի ունեցաւ քոքթէյլ հիւրասիրութիւն մը:

Թրքմ. Ա.Ճ.



ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱԳԱՐՁՈՒԹՒՆՆԵՐՈՒ ՏԱՐԵԳԱՐՁՆԵՐ

20-րդ դարու ընթացքին, եգիպտահայ համայնքի երաժշտական ու մշակութային կեանքի երկու կարեւորագոյն իրադարձութիւններ տարօրինակ կերպով տեղի կ'ունենային իրարմէ կէս դար «հեռաւորութեամբ»:

Առաջին իրադարձութիւնը 1911-ին Կոմիտաս Վարդապետի այցն էր Եգիպտոս, իսկ երկրորդը՝ Արամ Խաչատրեանի այցը Միջին Արեւելք (Եգիպտոս եւ Լիբանան):

Իր բազմաբեղուն գործունեութեամբ Կոմիտաս՝ Եգիպտոսի մէջ առաջին անգամ ըլլալով հայ համայնքին ծանօթացուց ազգային երաժշտութեան երկու ինքնատիպ ճիւղերուն, (ֆոլքլորայինն ու եկեղեցականը), իրենց անաղարտ վիճակին մէջ:

Այդ գործունեութեան գագաթնակէտը հանդիսացաւ անոր կազմած ու ղեկավարած 190 հոգիկոնց երգչախումբին գոյգ համերգները, նախ Աղեքսանդրիոյ Ալիամարա թատերասրահին՝ (5.6.1911-ին), ապա Գահիրէի Ապպաս Յէլմի Խտիվի անուան թատերասրահին մէջ (16.6.1911-ին):

Անշուշտ ժամանակին այդ երկու համերգները մեծ ոգեւորութիւն յառաջացուցած են եգիպտահայ համայնքի անդամներուն մօտ, եւ վճռական դեր խաղացած՝ անոնց ինքնաճանաչման ու ինքնահաստատման ուղղութեամբ: Չմոռնանք նշելու նաեւ, որ ոչ միայն հայ մամուլը (Գահիրէի՝ «Լուսաբեր Արեւը» եւ Կ. Պոլսոյ «Բիւզանդիոն»ը), այլ նաեւ եգիպտական մամուլը, օրը-օրին հետեւած են Կոմիտասի գործունեութեան Եգիպտոսի մէջ:

Երկրորդ իրադարձութիւնը Արամ Խաչատրեանի այցն էր Միջին Արեւելք՝ Եգիպտոս եւ Լիբանան, որ տեւեց 41 օր: Արդարեւ մեծ նուագահանը իր երաժիշտ տիկնոջ՝ Նինա Մաքարովայի ու ջութակահար Վիկտոր Փիքիայզէի հետ Գահիրէի օդանաւակայան կը հասներ Կիրակի, 16 Ապրիլին:

Շնորհիւ երաժշտութեան սիրահար հօրս՝ ես, որ այդ ժամանակ 14 տարեկան պատանի մըն էի, բախտը ունեցած եմ վայելելու Խաչատրեանի քարիզմաթիկ անձին

ու արուեստին հմայքը: Արդարեւ, ծնողներուս հետ ներկայ եղած եմ Գահիրէի մէջ վարպետին ղեկավարած 5 նուագահանդեսներէն երկուքին: Առաջինին՝ որ տեղի ունեցաւ Քասր Էլ Նիլ սինեմայի դահլիճին մէջ, 24 Ապրիլ 1961-ին, եւ վերջինին՝ որ տեղի ունեցաւ Գահիրէի Օփերային մէջ, 3 Մայիսին:

Այդ առաջին նուագահանդեսին Գահիրէի սիմֆոնիք նուագախումբը Ա. Խաչատրեանի ղեկավարութեամբ նուագեց «Մասքարատ»-էն ու «Գայիանէ»-էն հատընտիրներ, նաեւ «Սիմֆոնիք Պոեմ»ն ու «Դաշնամուրի Քոնչերթօ»ն, մենակատար՝ իտալացի երիտասարդ դաշնակահար Սերճիօ Փերթիքարոլլի, որու կատարումը խորապէս ինձ յուզեց: Երկրորդ նուագահանդեսին կատարուեցան «Գայիանէ»-էն հատուածներ, «Դաշնամուրի Քոնչերթօ»ն եւ ապա «Չութակի Քոնչերթօ»ն:

Այս գոյգ նուագահանդեսները խորապէս ցնցեցին եութիւնս ու «քանդակուեցան» ուղեղիս մէջ՝ ինչպէս հիերոկլիֆները կրանիթի մակերեսին:

Գահիրէէն յետոյ Խաչատրեան երկու նուագահանդես տուաւ աղեքսանդրիացիներուն՝ Սոհամմետ Ալի հանդիսասրահին մէջ (4 եւ 5 Մայիս 1961), ապա 8 Մայիսին իր տիկնոջ հետ մեկնեցաւ Պէյրութ եւ այնտեղ տուաւ 4 նուագահանդես: Անոնք Գահիրէ վերադարձան 22 Մայիսին:

Այսպիսով Խաչատրեան Միջին Արեւելքի երեք քաղաքներու մէջ ղեկավարեց 11 նուագահանդեսներ, որոնք մեծ տպաւորութիւն ձգեցին երաժշտասէր հասարակութեան մօտ:

Եգիպտահայութիւնը 20-րդ դարու մէջ բախտաւորութիւնը ունեցած է վայելելու հայ ժողովուրդի երկու մեծագոյն երաժիշտներու արուեստին հմայքը:

Հրանդ Զեյնիշեան



ԱՅԴ ԱՆՀԱՂՈՐԴ, ԲԱՅՑ ՏԱՂԱՆԴԱԴՈՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԸ՝ ՇԱՆԹ ԱԲԵՏԻՍԵԱՆ (ԾՆՆԴԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՔՈՎ)

Բաւական դժուար եղաւ տեղեկութիւններ գտնել այս արուեստագետին մասին: Ճանչցողները զինք կը բնութագրէին որպէս չափազանց տարօրինակ, ինքնամփոփ, անհաղորդ եւ անճշդապահ անձնաւորութիւն մը: Անոնք, իբրեւ կանոն, բնաւորութեան այդ գիծերը կը բացատրէին Շանթին «դժբախտ մանկութիւն» ունեցած ըլլալու հանգամանքով: Այդուհանդերձ, համացանցի կայքէն առնուած եւ մեր տրամադրութեան տակ եղած սակաւաթիւ տուեալներով, որոշեցինք ներկայացնել զայն մեր արուեստասէր ընթերցողներուն՝ նախ որովհետեւ ան արդէն ինքզինքը հաստատած եւ միջազգային ճանաչում ձեռք բերած է, եւ երկրորդ՝ հակառակ իր բնաւորութեան գիծերուն շուրջ եղած տարակարծութիւններուն, զայն ճանչցողները միակարծիք են մէկ կէտի մէջ՝ ան տաղանդաւոր է:

Շանթ Աւետիսեան ծնած է Գահիրէ, 1951թ.: Անոր մեծ հայրն ու մեծ մայրը Եղեռնէն մազապուրծ՝ ապաստան գտած են Եգիպտոսի մէջ: Ինք մեծցած է երկրի վերջին թագաւոր Ֆարուքի իշխանութեան (1937-1952թթ.) մայրամուտը աւետող յուլիսեան յեղափոխութեան ազգայնական եւ հայրենասիրական կոչերու ժամանակաշրջանին: Յեղափոխութիւն մը, որ անկախութենէ զատ իր հետ բերաւ նաեւ ընկերային-տնտեսական խնդիրներ: Վերջ դնելով գաղութատիրութեան, երկիրը ինքնուրոյն պէտք է լուծեր այդ խնդիրները:

Անոր արուեստը, սովորաբար, երկու չափերով կը ներկայանայ հանդիսատեսին: Յորիզոնական թրաֆարէթային՝ 50-70սմ չափով վերամշակուած խաւաքարտի վրայ պատրաստուած ներկանիւթերէ (պիգմենտներէ) եւ արաբական խեժէ, եւ ուղղահայեաց թրաֆարէթային՝ 150x250սմ չափով ալիքածէ ստուարաթուղթի վրայ պատրաստուած ներկանիւթերէ եւ արաբական խեժէ:

Աւետիսեանի թրաֆարէթները քսան երկարատեւ տարիներու ուսումնասիրութիւններու արդիւնք են: Այդ ընթացքին ան կրցած է Գանատայի եւ Ֆրանսայի մէջ ստացած իր գիտելիքները միախառնել փարաւոնական շրջանի անձանօթ արուեստագետներու մեհենադրոշմ արձանագրութիւններու խորհրդապաշտական նմուշներուն, արաբական ճարտարագիտութեան երկրաչափական եւ վերացական հասկացողութիւններուն, օսմանեան գործուածքներու ծաղկազարդ բներգներուն (մոթիւներուն) եւ անշուշտ հայկական մանրանկարչութեան նրբագեղ տարրերուն: Նմանատիպ նկարներու շարքը, որ ան վրձնել սկսած է 1991-ին Լուքսորի մէջ, կարելի է արուեստագետին համար շրջադարձային հանգրուան մը համարել: Ան այդ ժամանակ գիտակցած է, որ ժամանակակից արեւմտեան ակադեմիական մթնոլորտին մէջ գոյատեւելու եւ իր ուրոյն տեղը հաստատելու համար, ինք իր հայկական եւ արաբական ակունքներուն պէտք է վերադառնայ:

«Ժամանակի ընթացքին ես հասկցայ նաեւ, որ այն ամէնը, ինչ որ ճաբոնական աւանդական արուեստին հետ առնչութիւն չունի, բարբարոսութիւն է: Այդ արուեստի պարզութիւնն ու նուազականութիւնը (մինիմալիզմը) ամբողջովին գեղեցիկի իմ պատկերացումներուս կը համընկնի: Ծիշդ ատոր միջոցով ալ սկսայ աւելի լաւ ըմբռնել անապատային կեանքին եւ վրանաբնակ քոչուորներուն յատուկ արաբական կենցաղային արժեքները, որոնք այնքան մօտ են ճաբոնականին», - կը խոստովանի արուեստագետը, որ գեղարուեստական նկարչութեան դասընթացներու հետեւած է Մոնրէալի մէջ, իսկ դրօշմնկարչութեան (Էսթամպ) եւ կիրառական արուեստի գաղտնիքները բացայայտած է Փարիզի Չարդարուեստի (դեկորատիւ) Ազգային



Բարձրագույն Դպրոցին մեջ՝ 70-ական թուականներուն: Եգիպտոսի մեջ ան աշակերտած է մեծ վարպետ Աշոտ Չօրեանին եւ յայտնի գեղանկարչուհի Նորա Ազատեանին: 1981-89թթ. աշխատած է եգիպտացի անուանի ճարտարագետ Հասան Ֆաթիին հետ, որմէ սորված է գնահատել պարզ առարկաներու առանձնայատկութիւնները: Ան ընդհանրապէս կ'ապրի եւ կը ստեղծագործէ Գահիրէի մեջ, իսկ կը հանգստանայ՝ Երեւանի մեջ:

Շանթի առաջին հրապարակային «Ելոյթը» եղած է Մայիս 2-12, 1969-ին Գահիրէի «Գառզու» պատկերասրահին մեջ կազմակերպուած 3 եգիպտահայ արուեստագետներու ցուցահանդէսին բերած մասնակցութիւնը, ուր ան հանդէս եկած է Հրանդ Զէշեանի եւ Վահէ Վարժապետեանի հետ համատեղ:

Այնուհետեւ, 1971-ին Մոսկուայի «Թէքէեան Մշակութային Կեդրոն»-ին մեջ մասնակցած է «Հայ Նկարիչներ» ցուցահանդէսին, 1972-ին ՀԲԸՄ-ի նիւերքեան պատկերասրահի «Գարնանային Ցուցահանդէս»-ին, 1976-ին Փարիզի Ալեք Մանուկեան եւ 1982-ին Գահիրէի Իտալական Մշակոյթի կեդրոններուն մեջ, 1993-ին Պահրէյնի Անհատական Հաւաքածոներու Պատկերասրահին, 1995-ին Լոնտոնի «Պարպիկան» կեդրոնին, 1996-ին Աթլանթայի (Ճորճիա) Տալթոն պատկերասրահին, 1998-ին Պելճիքայի Անվերս քաղաքին եւ 2000-ին Քոփէնհակէնի Ժամանակակից Արուեստի թանգարաններէն ներս կազմակերպուած ցուցահանդէսներուն:

Վերջին տարիներուն Աւետիսեան մեծ յաջողութեամբ ցուցադրուած է Պրիւսէի Երոյթորհրդարանի շէնքին մեջ «Ժամանակակից Արաբ Ներկայացուցիչներ» (2008թ.), Պերլինի «Մարտիչ Կրոպիուս Պօ» թանգարանի, «Թասուիր, Իսլամի եւ Արդիականութեան Պատկերաւոր Գծագիրներ» (2009թ.), Լիվերփուլի «Պլու Զօթ Սենթըր»-ի եւ Պէյրուսի «Ցուցադրութեան Կեդրոն»-էն (2010թ.) ներս կազմակերպուած ցուցահանդէսներուն ժամանակ:

Անհատական ցուցահանդէսներով ան հասարակութեան ներկայացած է Գահիրէի, Ադէքսանդրիոյ, Մոսկուայի, Լոս Անճելէսի,

Ուոթըրթաունի, Փարիզի, Լոնտոնի, Պէյրուսի եւ Ամսթերտամի, իսկ վերջին շրջանին նաեւ Տուպայի եւ Ուելսի (2010թ.) մեջ:

Անոր կտաները տեղ գրաւած են Սմիթսոնեան Հաստատութեան Ափրիկեան Արուեստի Ազգային՝ Լոնտոնի Բրիտանական թանգարաններուն, Ամսթերտամի «Թրոփենմուզէում»-ի, Սկոպտիոյ եւ Յորդանանի Ազգային Պատկերասրահներուն մեջ:

1976-ին Գահիրէի մեջ կազմակերպուած «Հայուհիներ» խորագիրով Շանթի անհատական ցուցահանդէսը, ըստ արուեստաբան Հրանդ Զէշեանի, անոր «հասունութեան առաջին գրաւականը» եղած է: 2006թ. հրատարակուած «Գահիրէի Թաֆարթները» գիրքը, որ խմբագրած է Լոնտոն բնակող լիբանանահրանական ծագում ունեցող գործակալ Ռուզ Իսսան (1), (Սաքի Պուքսը հրատ), 1990-էն մինչեւ մեր օրերը անոր ստեղծած աւելի քան 200 թաֆարթային գործերու համապարփակ ուսումնասիրութիւն մըն է: Այդ գործերը, որոնց թեմաները, իր իսկ խօսքերով, կ'ընտրէ հասարակական, զանգուածային լրատուամիջոցներէն կամ ալ սովորական փողոցային յայտարարութիւններէն, այն մտահոգութիւնը կ'արտայայտեն, որն իր մեջ յառաջացած է որպէս Ծոցի պատերազմի արդիւնք:

Յունուար 2006թ. Ռաուշէի (Պէյրուս) «Կալըրի Ժանին Ռուպէյզ» պատկերասրահին մեջ կազմակերպուած անոր անհատական ցուցահանդէսին առթիւ, թերթերը գրած են, թէ ան ոտք կը դնէ Լիբանան մարդու մը պէս, որ ստեղծուած իրավիճակէն «ելք մը կ'ուզէ գտնել»:

Իսկ Լոնտոնի Բրիտանական Թանգարանին մեջ կազմակերպուած «Ինքնուրոյն, Պատմութիւն եւ Զաղաքականութիւն» խորագիրը կրող անհատական ցուցահանդէսին ան համարձակ քայլերով մտած է միջազգային ասպարէզ: Այդ առթիւ հրատարակուած քաթալոկին մեջ նշուած է. «Իր մոտիպերու գլխաւոր թեման անցած-գացած ժամանակաշրջանի զգացականութիւնն ու փայլքն են, երաժշտութիւնն ու նուագախաղը, յեղափոխական կոչերն ու տիպարներու նպատակադրումը եւ անշուշտ նաեւ՝ հասարակ ժողովուրդի կողմէ



սիրուած հերոսներն ու արուեստագետները»:

Այդ արուեստագետներու շարքին առաջինը պէտք է կշռել Օմ Բալսումը, ապա Ֆէյրուզը, Ասմահանը, Ապտ էլ Յալիմ Յաֆէզը, Ֆարիտ էլ Աթրաշը (արաբական աշխարհի ամենայայտնի երգիչ-երգչուհիներ) եւ Յիւսո Ռօստոմը (դերասանուհի): Այդ բոլորը Շանթը ներկայացուցած է որոշակի կարօտախտի զգացումներով, 1950-60-ականներու բազմազգ Գահիրէի քաղցր յիշատակներով, միաժամանակ գիտակցելով, որ այդ պատմական օրերու քաղաքական ուժգնութիւնը անկարող էր քողարկել մարդկային տկարութիւններն ու թերութիւնները, աստուայով նաեւ, որ ժամանակը դաժան է եւ այդ բոլորը կրնան խիստ «դիրաբեկ» դառնալ՝ այսինքն մոռացութեան մատնուիլ:

Աւետիսեան հարուստ գոյներով պատկերուած դիմանկարներով կը ներկայացնէ Ֆարուքեան շրջանը, ուր թագաւորը եւ այլ պաշտօնական անձեր գիշերային թանկարժէք համազգեստներ կամ քոսթիւմներ կը կրեն: Յատկանշական գիծն այդ դիմանկարներուն մէջ պատկերուած անձնաւորութեան ետին անկաշկանդ ձեւով ներկայացուած յետսադաշտն է, որ որոշ մասնագետներու կարծիքով ֆրանսացի Անրի Մաթիսը կը յիշեցնէ: Իսկ ազգային ինքնագիտակցութեան եւ արաբ միասնականութեան խորհրդանշ Վամալ Ապտ էլ Նասրը ան պատկերած է յեղափոխական առաջնորդին բնորոշ սեւ ակնոցով՝ եգիպտական Նոր դրօշակի յետսադաշտին վրայ: Աւետիսեանի Նասրը իշխող ներկայութիւն մըն է, բայց միաժամանակ հասարակ ժողովուրդի ներկայացուցիչն է: Եւ Աւետիսեան այդ ժողովուրդի անցումային շրջանի վկայագիրը կու տայ՝ պատկերելով քուէատուփերու առջեւ կեցող գիւղացին, գործաւորն ու կիները:

Հակառակ որ անոր պայծառ եւ կենսուրախ թրաֆարէթային պատկերներուն կիզակետը եգիպտական կեանքի տարբեր բնագաւառներն են, բայց ան հիմնական շեշտը կը դնէ երկրի քաղաքական իրադարձութիւններուն եւ անոնց գլխաւոր դերակատարներուն վրայ: Օմ Բալսումը, օրինակ, Նասրի կառավարութեան անխոնջ

պաշտպանն էր: Չայն կը համարէին «արեւելքի աստղը» (Քաուքէպ էլ շարք): Ան իր հռչակաւոր թաշկինակով եւ սեւ ակնոցով «ամէնուն կողմէ յարգուած տիկինն էր» (սեթ էլ քոլ): Կենցաղային իրերէն թրանզիւթորը, որ Նոր-Նոր եգիպտական շուկայ «ներխուժած» էր, իր ըսելիքը ժողովուրդին հասցնելու Նասրի նախասիրած միջոցն էր: Մուրճն ու մանգաղը՝ անոր քաղաքական ուղղուածութեան եւ խորհրդային Միութեան օժանդակութեամբ Ասուանի մեծ ջրամբարի շինարարութեան վկայութիւնը:

Շանթը ըլլալով գործուածքներու վրայ նկարներ դրոշմելու արուեստին, Աւետիսեան համարձակօրէն կը ստեղծէ նաեւ այլ խորհրդապատկերներ: Օրինակ՝ երկու ալիքածեւ գիծերու եւ երեք շրջանակներու (համապատասխանաբար վագրի եւ ընձառիւծի խորհրդանշանները) միջոցով ան կը ներկայացնէ օսմանեան սուլթաններու ուժն ու կարողութիւնը: Կամ՝ ուրիշ կտաւի մը մէջ այլ խորհրդանշաններու միջոցով ճշգրտօրէն կը վերարտադրէ գաղութատիրութեան ձգած ժառանգութիւնն ու արաբական ազգայնականութեան զարթօնքը:

Այս խորհրդանշաններուն քով, Աւետիսեան մեծ վարպետութեամբ իր կտաւներուն մէջ կ'օգտագործէ նաեւ արաբական եւ լատինական տառատեսակներ ու հին եգիպտական խորհրդապատկերներ: Օրինակ, Ասուպիսը, որուն պարզապէս «շուն» կ'անուանէ, մենք կը տեսնենք Ասուանի զբօսաշրջիկներու սիրելի «Բաթարաքթ» պանդոկին վարի մասին վրայ դարձած ձեւով: «Մենաշան» կ'արտայայտէ եգիպտոսի հին յուշարձաններու նկատմամբ արեւմուտքի ունեցած անյազ շահերու հետապնդումը. հոն է նաեւ սրբազան թռչուն Իպիսը: Այս ամէնուն քով-քովի յայտնուիլը, առիթ կու տայ հետաքրքրական բացատրութիւններ որոնելու Ծոցի պատերազմի, Օմ Բալսումի առաքելութեան եւ այլ հասարակական ու քաղաքական երեւոյթներու մասին:

Անոր եռապատկերներուն մէջ նրբօրէն եւ մանրամասնօրէն ներկայացուած են Մամուրան (Ֆարուք թագաւորին ամառանոցը), Գահիրէի Մոհամատ Ալի փողոցը, թագաւորներու հովիտը, Նուպիական աւանը, հարուստ վաճառականի մը առանձնատու-



ընդ եւ գիւղացիի հասարակ բնակարանը:
 1973թ. Գահիրէի «Արեւ» օրաթերթի թղթակցուի Մարօ Սագայեանին տուած իր հազուադէպ հարցազրոյցներէն մէկուն մէջ Աւետիսեան կ'ըսէ, որ «իրական ուսումը անձի մը խորքին մէջն է եւ ոչ դուրսի տուեալներուն», եւ որ ինք պիտի ցանկար «միշտ անկեղծ ըլլալ անձիս եւ գործերուս հանդէպ»: Եւ ամենակարեւորը՝ «երբեք չկարծել, որ հասած եմ արուեստագէտի տիտղոսին, որն ըստ իս գոյութիւն չունի երբեք: Պի-

տի ջանամ ըլլալ միշտ հետաքրքիր եւ պրպտող»: («Արեւ», 1 Օգոստոս, 1973թ.):
 Վստահ ըլլալով, որ Շանթ. եւ՛ հետաքրքիր, եւ՛ պրպտող արուեստագէտ մըն է, յարատեւութիւն, նորացող եռանդ ու կորով եւ անվերջ յաջողութիւններ կը մաղթենք անոր, միաժամանակ խորհուրդ տալով՝ աւելի դիւրահաղորդ ըլլալ:

Պատրաստեց՝

Յ. Ծուլիկեան «Ազգ» օրաթերթ Արեւմտահայերէնի վերածեց՝ Շ.Ս.

Ծանօթագրութիւն.

1. *Ռոուզ Իսսան Նաեւ գրող եւ շարժապատկեր արտադրող մըն է: Լոնտոնի «Պարպիկան Արուեստի Կեդրոնի», «Լէյթըն Դաուզ» թանգարանի եւ այլ մշակութային հաստատութիւններու համագործակցութեամբ ցուցահանդէսներ եւ շարժապատկերներու փառատօսներ կազմակերպած է: Այդ հաստատութիւններուն օգտակար խորհուրդներ տուած է Մերձաւոր Արեւելքի երկիրներէն արուեստի գործեր ձեռք բերելու ուղղութեամբ: Վենետիկի 50-րդ պիենալին «Ազգային Տաղաւարներու» դատակազմի անդամ եղած է:*

- Նկար 1. *Հատուած «Նասըրեան Ժամանակաշրջանը» կտաւէն (1994թ.)*
- Նկար 2. *«Աղջկայ Դիմանկար», 1973թ.*
- Նկար 3. *«Փարաւոնական Պարտեզ»*





ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԵՑԱԲ «ԹՈՒՄՕ» ԿԵԳՐՈՆԸ

14 Օգոստոս 2011-ին Երեւանի Աջափնեակ թաղամասին մէջ, հանդիսաւոր արարողութեամբ բացուիլ կատարուած է «Թումօ» նորագոյն տեղեկատուական ճարտարարուեստներու (Information Technology) կեդրոնին՝ մասնակցութեամբ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանի, կեդրոնի հիմնադիր՝ «Սիմոնեան» Կրթական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի նախագահ Սեմ Սիմոնեանի եւ իր ընտանիքի ու բարձրաստիճան պաշտօնեաներու:



Սեմ Սիմոնեան Հայաստանի մէջ հիմնած է նաեւ «Սիմոնեան» Կրթական Հիմնադրամը, որուն նպատակն է տեղեկատուական ճարտարարուեստներու կիրարկումի միջոցով կրթական ծրագիրներու իրականացումը:

«Թումօ» կեդրոնի կրթական ծրագիրը իր մէջ

կ'ընդգրկէ հեռանկարային չորս ուղղութիւններ. «թուային մետիա», «խաղերու ստեղծում», «անիմասիոն» եւ «կայքերու մշակում»:

Կեդրոնին նպատակն է հազարաւոր երեխաներու տրամադրել իր նախադէպը չունեցող ուսումնական փորձառութիւն՝ տեղեկատուական ճարտարարուեստներու կիրարկումը կրթական ծրագիրէն ներս, ինչպէս նաեւ համաշխարհային ճարտարարուեստներու նուաճումներուն ծանօթացնելու նպատակով երիտասարդութեան համար դասընթացքներու եւ աշխատանքային ժողովներու կազմակերպումը: Միաժամանակ, նպաստել նաեւ Հայաստանի նոր սերունդին ստեղծագործական յառաջընթացին եւ համակարգիչներու մասնագետներու պատրաստութեան:

Հանրապետութեան ղեկավարը իր ողջոյնի խօսքին մէջ նշեց, որ տեղեկատուական ճարտարարուեստներու այսպիսի կեդրոնի մը բացումը Հայաստանի համար ռազմավարական կարեւորութիւն ունի: Ան շեշտեց, որ ինք ոգեւորուած է կեդրոնին բացումով եւ վստահեցուց, թէ ծրագիրը պիտի ունենայ յստակ արդիւնքներ եւ կարեւորութիւն Հայաստանի համար:

Սերժ Սարգսեան նշեց նաեւ, որ ՏԵՐ եւ Տիկին Սիմոնեաններու աշխատանքը ո՛չ միայն շնորհակալութեան, այլեւ խրախուսանքի արժանի է, որովհետեւ, բացի իր կիրառական նշանակութենէն, անիկա նաեւ լաւ օրինակ մըն է բոլոր անոնց համար, որոնք մեծ ջանքերու շնորհիւ կրցած են յաջողութիւններու հասնիլ իրենց ասպարեզէն ներս եւ այդ յաջողութիւններէն փոքրիկ մասնիկ մը կը ներդնեն հայրենիքին մէջ:

Նախագահ Սերժ Սարգսեան նշեց նաեւ, որ ՏԵՐ եւ Տիկին Սիմոնեաններու աշխատանքը ո՛չ միայն շնորհակալութեան, այլեւ խրախուսանքի արժանի է, որովհետեւ, բացի իր կիրառական նշանակութենէն, անիկա նաեւ լաւ օրինակ մըն է բոլոր անոնց համար, որոնք մեծ ջանքերու շնորհիւ կրցած են յաջողութիւններու հասնիլ իրենց ասպարեզէն ներս եւ այդ յաջողութիւններէն փոքրիկ մասնիկ մը կը ներդնեն հայրենիքին մէջ:

Կեդրոնին բացմանը «Սիմոնեան» հիմնադրամի տնօրէն Մարի Լու Փափագեան յայտնեց, թէ նման կեդրոն գոյութիւն չունի որեւէ երկրի մէջ. ասիկա աշխարհի մէջ իրականացած նորարարութիւններուն եւ ճարտարագիտութիւններուն ծանօթանալու բացառիկ կեդրոն մըն է: Ան ըսաւ որ կեդրոնը պիտի գործէ անվճար, որու դասընթացքներուն կրկան հետեւիլ 12-18 տարեկան պատանիներ, ներառեալ բոլոր հետաքրքրուող մեծահասակները. նոյնիսկ գիտնականներ պիտի կարենան կիրառել կեդրոնին մէջ գործող ճարտարագիտական միջոցները:

«Թումօ» կեդրոնի հիմնադիրն է ամերիկահայ բարերար, ՀԲԸՄիութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ Սեմ Սիմոնեան, որ հիմնադիրն է նաեւ Միացեալ Նահանգներու մէջ գործող «Էյ-Փի-Ճի Լէփս Էյ-Էմ» ընկերութեան, որուն մասնաճիւղը 1997էն ի վեր կը գործէ նաեւ Հայաստանի մէջ:

Մարի Լու Փափագեան նշեց նաեւ, թէ



մէկ տարի ետք արդէն, յառաջադէմ աշակերտները հնարաւորութիւն պիտի ունենան կեդրոնին 2-րդ յարկը բարձրանալու, ուր իրենց անձնական գրասենեակները պիտի ունենան:

Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան հետ ձեռք բերուած համաձայնութեամբ, մայրաքաղաքի եւ մարզերու դպրոցները հնարաւորութիւն պիտի ունենան առաւօտեան ժամերուն այցելել «Թումօ»՝ տեղեկատուութեան առարկայի պահերը հոն անցընելու համար:

«Թումօ», ուր դասերը մեկնարկած են մէկ Սեպտեմբերէն, յառաջիկայ ամիսներուն հնարաւորութիւն ունի շաբաթական 7500 հոգի ընդունիլ արտադպրոցական ժամերուն: Ընդհանուր թիւով՝ «Թումօ»-ի անդամ կրնան դառնալ մինչեւ 10.000 մարդ:

Կեդրոնի խորհրդատու Վիոլէթ Գրիգորեան ըսաւ. «Թումօ»-ն պայթիւնի է նման, բայց այն մի վայրկեանում չի բերի փոփոխութիւններ: Ի յայտ կը գայ նոր սերունդ, նոր մտածողութեամբ ու ժամանակակից հմտութիւններով մարդիկ»:

Տեղեկացնենք, որ կեդրոնի բացման հանդիսութիւնները սկիզբ առած էին պաշտօնական բացումէն երկու օր առաջ՝ 12 Օգոստոսին:

Բացօթեայ համերգներով հանդես եկած են «Ռէինքարնացիա», «Տորիանս» խումբե-



Տէր եւ Տիկին Սեմ եւ Սիլվա Սիմոնեան

րը, DJ Պաքս Սթարը՝ ԱՄՆ-էն, ցուցադրուած է «Մի Կաթիլ Թումօ» եռաչափ արտապատկերումը: Իսկ 14 Օգոստոսին, դարձեալ բացօթեայ համերգով, հանդես եկած է ամերիկահայ հանրայայտ ռոք-երաժիշտ, երգահան, աշխարհահռչակ «System Of A Down» խումբի մենբրօքի Սերժ Թանգեան՝ կատարելով գործեր «Elect The Dead Symphony» ալպոմէն: Ան ելոյթ

ունեցած է Հայաստանի դասական ոճի 40 երաժիշտներու նուագակցութեամբ, իսկ խմբավարը՝ Համիլէ Մքքիչ, այս յատուկ առիթով Աւստրալիայէն հրաւիրուած էր:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան «Թումօ»-ի մէջ հանդիպում մը ունեցած է Սերժ Թանգեանին հետ՝ խօսելով երգիչի ստեղծագործական ու հասարակական գործունեութեան մասին: Յետոյ նախագահը ներկայ եղած է Թանգեանի համերգին:

Կ'արժէ տեղեկացնել որ բարերար Սեմ Սիմոնեան՝ մինչեւ 2010 թուականի աւարտը, 43.5 միլիոն տոլարի ներդրում կատարած է Հայաստանէն ներս: Իսկ յառաջիկայ երեք տարիներու ծրագիրին համար կը նախատեսուի ծախսել 6.6 միլիոն տոլար եւս: Հայաստանի կառավարութիւնը երեք տարի կեդրոնը ազատած է հարկերէ:

Պատրաստեց՝ Շ. Մ.



ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեան իր ողջոյնի խօսքը կ'ուղղէ ներկաներուն



Հայաստանի ղեկավարը կը ծանօթանայ «Թումօ»-ի հնարաւորութիւններուն



ՃԱՏՐԱԿԸ ԴՆՍԱԲԱՆԴՈՒԹԵԱՆ ՆԻՒԹ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ճատրակը մարզական աշխարհի թագաւորն է: Ան կը նպաստէ մարդոց տրամաբանական մտածողութեան զարգացմանը:

Այս կարելոր գործօնը նկատի ունենալով, Հայաստանի Կրթութեան եւ Գիտութեան Նախարարութիւնը հրահանգեց, որ այս տարուան 1 Սեպտեմբերէն սկսեալ «Ճատրակ»ը որպէս դպրոցական առարկայ դասաւանդուի Հայաստանի դպրոցներէն ներս (2րդ - 4րդ դասարաններու մէջ):

Կրթութեան եւ Գիտութեան Նախարար Արմէն Աշոտեան եւ Ճատրակի Դաշնութեան (Ֆետերասիոնի) փոխ-Նախագահ Սմբատ Լպուտեան այս մասին ասուիլիս մը կազմակերպելով նշեցին, թէ դպրոցներու մէջ ճատրակը իբրեւ դասաւանդութեան նիւթ ընդգրկելու «յանդուզն» քայլով, Հայաստան աշխարհի տարածքին առաջին երկիրը եղաւ, ուր ճատրակը կը դասաւանդուի դպրոցներէ ներս եւ այն ներառնուած է պետական չափորոշիչներու մէջ: Այս տարի, ճատրակը պիտի դասաւանդուի 2-րդ դասարանցիներուն՝ շաբաթական 2 դասաժամով, յաջորդ տարին՝ 3-րդ, իսկ երկու տարի վերջ՝ 4-րդ դասարանի աշակերտներուն: 2013-էն սկսեալ ճատրակը ներդրուած պիտի ըլլայ ամբողջ Նախակրթարանին մէջ:

Արմէն Աշոտեան շեշտեց որ ճատրակի ներմուծումով, համաաշխարհային մանկավարժական հանրութեան ուշադրութիւնը սեւեռուած է Հայաստանի վրայ: Հայաստանի այս քայլը շատերու կողմէ որակուած է որպէս «ցնցող»: Ճատրակի ուսումնական ծրագիրներու եւ դասագիրքերու շուրջ արդէն իսկ լուրջ հետաքրքրութիւն ցուցաբերուած է:

«Մենք ի հարկէ բոլոր երեխաներին ճատրակիստ դարձնելու նպատակ չունենք. դա անիրատեսական է: Ուսումնական ծրագիրների մէջ այդ առարկան ներառնելու հիմնական նպատակը աշակերտների տրամաբանական մտածողութիւնը զարգացնելն է: Վստահ եմ որ ճատրակը պիտի նպաստի սեփական որոշումների համար պատասխանատուութիւն կրող, հմուտ եւ կազմա-



Ճատրակի դասագիրքը Բ Նախակրթարանի համար

կերպուած անձերի ձեւաւորմանը»,- ըսաւ Նախարարը:

Արմէն Աշոտեան տեղեկացուց որ արդէն տպուած են «Ճատրակ»-ի դասագիրքը, աշխատանքային տետրակները, ուսուցչական ձեռնարկը եւ գործնական աշխատանքներու հաւաքածոն: Դպրոցներուն բաժնուած են ճատրակի սեղաններ, ճատրակի խաղաքարեր, ցուցատախտակներ եւ այլ պարագաներ:

Իսկ Սմբատ Լպուտեան տեղեկացուց որ վերապատրաստուած են 1219 մանկավարժներ, որոնք համապատասխան քննութիւններ յանձնելով, իրաւունք ստացած են դասաւանդելու «Ճատրակ»ը:

Ասուիլիսին ներկայ գտնուող մասնագետներ, ճատրակի ուսուցիչներ եւ հոգեբան մանկավարժներ վստահեցուցին, թէ 6-7 տարեկան մանուկին համար ճատրակը լիովին իւրացնելու լաւագոյն տարիքն է:

«Տը Ֆիլատելֆիա Ինքիւրեր» թերթին մէջ հրատարակուած յօդուած մը կը գովաբանէ Հայաստանը ու կը գրէ. «Թէեւ Հայաստան գերտերութիւն մը չէ, սակայն շատ բան կրնայ սորվեցնել Ամերիկայի՝ կրթութեան ուղղութեամբ»:

Թերթը կը յիշեցնէ որ ճատրակը որպէս պարտադիր նիւթ ընդգրկուած է Հայաստանի դպրոցներուն մէջ: Յօդուածին հեղինակը այդ քայլը «գերազանց մրցակցութիւն» կը նկատէ «երկրի մը համար, որ գերտերութեան կոչման կը հասնի ճատրակի աշխարհէն ներս»:

Պատրաստեց՝ Ը. Մ.



ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ (2011)

Ուրբաթ 21, Շաբաթ 22 եւ Կիրակի 23 Յոկտեմբեր 2011-ին Գահիրեի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կազմակերպեց պասքէթպոլի տարեկան եզրափակող մրցաշարքը մասնակցութեամբ ՅՄԸՄ Արարատի, ՅՄԸՄ Կամքի, Ս. Թերեզայի եւ կազմակերպիչ ակումբին ու բացակայութեամբ Աղեքսանդրիոյ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

25 Յունուարի յեղափոխութենէն ետք երկրին մէջ տիրող անորոշ ու անապահով վիճակին հետեւանքով, 2011-ի ամրան եղանակին Աղեքսանդրիոյ 2 ակումբներուն՝ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ Յուլիսի՝ եւ ՅՄԸՄ Կամքի Օգոստոսի մրցաշարքերը ջնջուեցան: Ձեռնարկներ, որոնք թէ՛ Գահիրեի եւ թէ՛ Աղեքսանդրիոյ մարզիկներուն ու մարզասերներուն արձակուրդները կ'որոշէին, յանկարծ չկային այլեւս: Սերունդներ, որոնք «մրցաշարքէն առաջ» կամ «մրցաշարքէն ետք» ով կը ծրագրէին իրենց ամառուայ ամիսներու արձակուրդները, եղան յուսախաբ ու անոնցմէ զրկուելէն ետք միայն կրցան գնահատել այս միջակումբային մրցաշարքերու կենսական դերը՝ մարզականի միջոցաւ գաղութի բոլոր անդամները հաւաքելու տարին 5 անգամ:

Ըստ Ուրբաթ օրուայ յայտագրին, ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 14 տարեկանէն վար տղաքը պիտի մրցէին Էլ Տարի խումբին հետ: Հակառակ որ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը իրենց հասակով կը զիջէին մրցորդ խումբին տղոց, սակայն իրենց արագ ու ճարպիկ խաղարկութեամբ շփոթութեան մատնեցին Էլ Տարի խումբը: Իրաքանչիւր մարզիկ կը ձգտեր իր լաւագոյնը ցուցաբերելու, որպէսզի խումբը յաղթեր ու պատիւ բերեր իր ակումբին: Շատ հետաքրքրական խաղէ մը ետք, ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ փոքրիկները յաղթեցին 28-19 արդիւնքով ու անհուն ուրախութեամբ եւ ներկաներուն քաջալերական ծափահարութիւններուն ընկերակցութեամբ ստացան Տեր եւ Տիկին Ռուբէն Սիմոնեանի նուիրած բաժակը:

Շնորհակալական խօսքի արժանի են

խումբին պատասխանատու Պր. Արմէն Պալթայեանն ու մարզիչ քաբթէն Մակետը, որոնք նոր սերունդին մէջ պասքէթպոլի հանդէպ սեր կը սերմանեն ու ապագայի առաջնակարգ մարզիկներ կը պատրաստեն երեց տղոց խումբին համար:

Նախքան օրուայ երկրորդ մրցումին սկսիլը, ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 14 տարեկանէն վար աղջիկները ակումբին համազգեստը հագած, ներկայացուցին cheer leading-ի պար մը, որ պատրաստութիւնն էր Ասիէ Ճիզմէճեանի եւ Մարիա Սիմոնեանի: Ներկաները մեծապէս գնահատեցին այս ներկայացումը, որ անթերի կատարուեցաւ:

Երկրորդ մրցումը Գահիրեի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՅՄԸՄ Կամքի երեց տղոց միջեւ էր: Կամքի տղաքը շատ մեծ ջանք թափեցին մրցումին բոլոր տեսողութեան: Գնահատելի է խումբին աւագ մարզիկ Չաւէն Լէյլէկեանի տարած աշխատանքը ակումբին պատանի եւ երիտասարդ մարզիկներով Կամքի խումբը կանգուն պահելու մէջ: Սակայն ուժերու եւ թիւի մեծ տարբերութեան պատճառով, մրցումը աւարտեցաւ ի նպաստ հիւրընկալ ակումբին՝ 72-42 արդիւնքով:

Շաբաթ օրուան առաջին մրցումը Գահիրեի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երեց աղջիկներուն եւ Նատի Էլ Գահերայի խումբերուն միջեւ էր: Նախընտրելի պիտի ըլլար որ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները մրցէին հայկական ակումբի մը խումբին հետ, սակայն ինչպէս նախապէս անդրադարձած էինք, ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ հրաւերները միշտ կը մերժուին «խումբը պատրաստ չըլլալու» պատճառաբանութեամբ:

Մրցումը սկսաւ բաւական տկար ու անորոշ: Շփոթութիւն մը կար 2 խումբերուն մէջ, սակայն երկրորդ քառորդախաղէն սկսեալ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները փոխեցին իրենց խաղաձեւը եւ կրցան իրերայաջորդ պասքէթներով արդիւնքը բարձրացնել: Մինչեւ խաղին վերջաւորութիւնը մրցումը բաւական տաք էր ու աւարտեցաւ ի



նպաստ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն՝ 42-34 արդիւնքով: Յաղթական խումբին անդամները, գլխաւորութեամբ դաշտէն անբաժան, աւագ մարզիկուհի Մարլօ Սիմոնեանի, ստացան Տէր եւ Տիկին Լեւոն Նիկոլեանի նուիրած բաժակը:

Վարձքը կատար խումբին պատասխանատու Տիկին Սօսի Յակոբեանի, մարզիչ քաբթէն Ալաա Չահրանի եւ օգնական մարզիչ քաբթէն Մակետի, որոնց ճիգերուն շնորհիւ Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ ունի լաւ մակարդակի երեց աղջիկներու խումբ մը, որ այս տարի կը մասնակցի Գահիրէի եւ Կիզէյի ֆետերասիոնի մրցաշարքին ու կը մրցի եգիպտական լաւագոյն խումբերու հետ:

Օրուան երկրորդ մրցումը ՅՄԸՄ Արարատի եւ Ս. Թերեզայի խումբերուն միջեւ էր, որ ուժերու անհամեմատ տարբերութեան պատճառով չկրցաւ ներկաներուն ուշադրութիւնը գրաւել: Ս. Թերեզա խումբին պատասխանատու ու աւագ մարզիկ Պր. Գրիգոր Միքայէլեան իր բոլոր կարելին կ'ընէ խումբը կանգուն պահելու համար, սակայն տարուէ տարի իրենց խաղարկութեան մակարդակը կը մնայ նոյնը, հակառակ որ բոլոր մարզիկներն ալ երիտասարդ են: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ Արարատին՝ 50-38 արդիւնքով:

Կիրակի օր Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կրտսեր աղջիկներու խումբը պիտի մրցեր Էլ Չուհուր խումբին դէմ, որ սակայն դժբախտաբար Շաբաթ գիշեր տեղեկացուց որ կամքէ անկախ պատճառով պիտի չկարենար ներկայ գտնուիլ յաջորդ օրուան մրցումին: Դժուար կացութեան մատնուեցաւ խումբին պատասխանատու Տիկին Սեւան Տրդատեանը որ անկարող եղաւ մի քանի ժամուայ ընթացքին ուրիշ խումբ մը գտնել: Ան շատ լաւ կը հասկնար մարզիկուհիներուն յուսախաբութիւնը, երբ կը զրկուին մրցում խաղալէ, մանաւանդ իրենց ակումբին կազմակերպած մրցաշարքին: Ուստի փոքրիկներուն քաջալերելու համար, մրցում մը կազմակերպուեցաւ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կրտսեր աղջիկներուն եւ կրտսեր տղոց խումբերուն միջեւ: Աղջիկները խաղացին ինքնավստահ ու խիզախ. անոնք որոշած էին թոյլ չտալ տղոց խումբին որ

խլէն բաժակը:

Չնահատելի է Տիկին Սեւան Տրդատեանի եւ քաբթէն Մակետի տարած աշխատանքը մատղաշ սերունդին հետ, որոնցմէ շատեր ապագայ կը խոստանան եւ մի քանի տարիէն պիտի գան միանալու երեցներու խումբին: Տէր եւ Տիկին Յրայր Տրդատեանի նուիրած բաժակին տիրացան կրտսեր աղջիկները՝ 29-24 արդիւնքով յաղթելէ ետք տղոց:

Նախքան աւարտական մրցումին սկսիլը, Տոքթ. Ճորճ Սիմոնեան յանուն ակումբի վարչութեան, շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի, որուն հովանաւորութիւնը կը վայելէր այս մրցաշարքը, օրուան նախագահուհի Տիկին Նուարդ Մեսրոպեանի, Տիկին Սոնա Սիմոնեանի եւ զաւակներուն, որոնք նուիրած էին երեց տղոց բաժակը ի յիշատակ ողբացեալ Տոքթ. Նորայր Սիմոնեանի ու մնացեալ բաժակները նուիրողներուն, չմոռնալով Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեանները, որոնք միշտ կը նուիրեն մրցաշարքի բոլոր մետայլները: Ան խնդրեց ներկաներէն յոտնկայս յարգել յիշատակը հանգուցեալ Տիար Անդրօ Մեսրոպեանի եւ Տոքթ. Նորայր Սիմոնեանի, նաեւ 25 Յունուար 2011-էն ի վեր նահատակուած եգիպտացիներուն: Ապա բարի գալուստ մաղթեց բոլորին, որոնք իրենց ներկայութեամբ սատար կը հաղիսանային մրցաշարքի յաջողութեան: Ան նոյնպէս, շնորհակալութիւն յայտնեց բոլոր մարզական ակումբներուն, որոնք իրենց մասնակցութիւնը բերած էին:

Անհամբեր սպասուած աւարտական մրցումը Գահիրէի ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՅՄԸՄ Արարատի խումբերուն միջեւ սկսաւ ու շարունակուեցաւ անտեղի լարուածութեամբ, որ արգելք հանդիսացաւ, երկու խումբերուն պարագային, լաւ խաղարկութիւն ցուցաբերելու: Պատահեցաւ որ մի քանի անգամ մարզիկները մէկ կիսադաշտէն միւսը կը սուրային՝ առանց որ մէկը պասքէթ մը իսկ արձանագրեր: Երբ կիսախաղը աւարտեցաւ արդիւնքը շատ ցած էր՝ 21-16, ի նպաստ ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ: Դադարին ՅՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կրտսեր աղջիկները անգամ մը եւս ներկայացուցին իրենց շատ յաջող cheer leading-ի պարը, ընկերակցութեամբ



DJ Օհան Ճանիկեանի, որ մրցաշարքին բուր տեւողութեան, սիրայօժար շէնցուց մթնոլորտը հաճելի երգերով եւ եղանակներով: Երրորդ եւ չորրորդ քառորդախաղերը շարունակուեցան նոյնքան անյաշող խաղարկութեամբ ու սիրտհատնում պատճառեցին բոլորին: Հագիւ մէկ ու կէս վայրկեան կը մնար աւարտին, սակայն տակաւին յայտնի չէր թէ որ խումբը պիտի ըլլար յաղթականը: Ամեն վայրկեան մարզիչներէն մէկը կամ միւսը time-out կը խնդրէր ցուցմունքներ տալու մարզիկներուն ու խաղին ձեւը փոխելու: Վերջապէս իրաւարարին աւարտի սուլիչը, որ անհամբեր կը սպասուէր, հնչեց ու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը 5 թիւի առաւելութեամբ՝ 52-47 արդիւնքով

յաղթական հանդիսացաւ: Տիկին Սոնա Սիմոնեանի նուիրած բաժակը յանձնուեցաւ նախկին մարզիկ Քրիս Սիմոնեանի:

Վարձքը կատար խումբին պատասխանատու Պր. Յակոբ Գարակեօզեանի, որուն ղեկավարութեան ներքեւ խումբը միշտ յաղթանակներ կ'արձանագրէ, նաեւ գլխաւոր մարզիչ քաբթէն Ամր Աշուրի եւ օգնական մարզիչ քաբթէն Ալաա Չահրանի, իրենց տարած աշխատանքին համար:

2011-ի առաջին մրցաշարքը յաջողութեամբ պսակուեցաւ , վարձքը կատար ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան ու նորանոր յաջողութիւններ պասքէթպոլի խումբին:

Սօսի Ներետեան-Յակոբեան





ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏ ԵՒ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ԿԸ ԿԱԶՄԵՆ 12 ԵՒ 14 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ ՊԱՍ-ՔԷԹ-ՊՈՒԼԻ ԵՐԿՈՒ ՄԻԱՑԵԱԿ ԽՈՒՄՔԵՐ



Դրուատանքի արժանի նախաձեռնությունամբ մը, Գահիրեի ՀՄԸՄ Արարատ եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբները համաձայն գտնուեցան կազմելու 12 տարեկանէն եւ 14 տարեկանէն վար, պասքէթպօլի երկու միացեալ խումբեր, մասնակցելու համար 2011-2012-ի եգիպտական ազգային պասքէթպօլի ախոյեանութեան մրցումներուն: Այս որոշումին յանգեցան՝ նկատի առնելով անցեալ Օգոստոսին Երեւանի մէջ կայացած 5-րդ համահայկական խաղերուն ընթացքին, Եգիպտոսի զոյգ ակումբներու պասքէթպօլի երեք տղոց միացեալ խումբին ցուցաբերած յաջող, տպաւորիչ խաղարկութիւնը եւ միացեալ ճիգերու շնորհիւ ձեռք բերուած դրական արդիւնքը, միշտ այն գիտակցութեամբ թէ միութիւնը զօրութիւն է:

Երկու սկզբնական ժողովներէ յետոյ, երկու ակումբներուն ներկայացուցիչները որոշեցին 12 տարեկանէն վար միացեալ խումբը կոչել ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ, իսկ 14էն վարը՝ ՀՄԸՄ Արարատ, տրուած ըլլալով որ ախոյեանութեան մրցաշարքին կրնան մասնակցիլ միայն գրանցուած ակումբները: Իւրաքանչիւր խումբ կազմուած պիտի ըլլայ զոյգ ակումբներէն՝ վեցական խաղացողներէ:

Երկու խումբերուն վարիչ մարմինը կազմուած պիտի ըլլայ զոյգ ակումբներու մարզիչներէն եւ վարիչներէն, որոնք ենթակայ պի-

տի ըլլան երկու ակումբներէն կազմուած յանձնախումբի մը, որ պիտի տնօրինէ կազմակերպչական զանազան աշխատանքները, ինչպէս արձանագրութիւն, համազգեստներ, փոխադրութիւն, ելեւտացոյց եւ այլն: Մարզական զգեստները պիտի պատրաստուին ՀՄԸՄ Արարատ եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբներէն ներս, ժամանակը պիտի ճշդուի անգամ մը որ եգիպտական պասքէթպօլի «Ֆետերասիոն»ը վերջնականապէս հաստատէ երկու խումբերուն մասնակցութիւնը:

Պասքէթպօլի երկու խումբերուն խաղացողներուն եւ վարիչներուն անունները հետեւեալներն են:

14 տարեկանէն վար Խաղացողներ

Ժորժ Անդրանիկեան
Արեգ Աբգարեան
Յակոբ Պալթայեան
Հարի Սուլթանեան
Սերժ Գոլոյեան
Կարէն Թորոսեան
Աշոտ Քեօհնելեան
Արմէն Աւետիսեան
Ռուբէն Ժամկոչեան
Ալէն Գոլոյեան
Գարլ Եուսէֆ

Արմէն Պալթայեան (վարիչ)
Արա Աւետիսեան (վարիչ)

Այման Ղոնէյմ (մարզիչ)

12 տարեկանէն վար Խաղացողներ

Արմէն Աբգարեան
Նուպար Սիմոնեան
Ճորճ-Արամ Աբիկեան
Ժիրայր Գարակեօզեան
Մաքսիմ Քեհիայեան
Ռաֆֆի Սաատ
Քրիս Ասատուրեան
Պերճ Ասատուրեան
Արի Տեր Ներսեսեան
Քրիստոֆըր Գազանճեան
Եար Մխտիկեան

Ռուբէն Սիմոնեան (վարիչ)
Արթօ Սրապեան (վարիչ)

Մակետ (մարզիչ)



ՀԲԸՄ «ԱՆԴՐԱՆԻԿ»Ի ՄԿԱՌՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ 150 ԱՐԻՆԵՐ ՈՒ ԱՐԵՆՈՅՇՆԵՐ

Այս տարի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության «Անդրանիկ»ի սկանուտական բանակումին իրենց մասնակցությունը բերին 150 արիներ եւ արենոյշներ՝ Հայաստանէն, ԱՄՆ-էն եւ Սուրիայէն:

Իրենց երկշաբաթեայ բանակումը անցընելով ՀԲԸՄիության Դիլիջանի բանակավայրին մէջ, անոնք այցելեցին նաեւ Հայաստանի տեսարժան վայրերը, ծանօթացան պատմական յուշարձաններուն եւ ներկայեղան ազգային մշակութային զանազան ձեռնարկներու: Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնոյ մէջ ընդունեց սկաուտները ու դիմելով անոնց ըսաւ. «Մեզ համար հաճելի է տեսնել, որ ՀԲԸՄ-ն այսպիսի գե-

ղեցիկ մի նախաձեռնութիւն է իրականացնում, որ արդէն աւանդոյթ է դարձել, եւ ամէն տարի մեր սիրելի հայրորդիք, որպէս սկաուտներ գալիս են Հայաստան՝ սորոգելու իրենց ազգային ինքնութիւնը՝ հաղորդակցութեամբ հայրենական սրբութիւնների եւ հայրենիքի հետ»:

Հանդիպման վերջաւորութեան Գարեգին Բ. գրուցեց սկաուտներուն հետ անոնց առօրեայէն, ապա բարի եւ յաջող կեցութիւն մաղթեց անոնց հայրենիքի գիրկին մէջ:

Հանդիպման ներկայ էր ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչութեան տնօրէն Աշոտ Ղազարեան:

ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԶԲՕՍԱՊՏՈՅՏԸ ԳԷՊԻ «ԱՅՆ ՍՈՒՄՆԱ»

Ինչպէս նախանցեալ տարիներուն, այս տարի եւս, Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կազմակերպեց չորսօրեայ զբօսապտոյտ մը, Օգոստոս 18-21, դէպի Կարմիր Ծով՝ «Այն Սոխնա»ի գեղատեսիլ «Ramada Renaissance» համալիրը:

Սոյն զբօսապտոյտին մասնակցեցան 68 հոգի, բոլորն ալ ՀԲԸՄ-ի ընտանիքի եւ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ակումբի անդամներ,

համակիրներ եւ բարեկամներ:

Մեծ թէ փոքր, հաճելի չորս օրեր վայելեցին բարձունքներու եւ ծովուն միջեւ գտնուող այս գեղեցիկ, խաղաղ վայրին մէջ ու գոհունակ վերադարձան իրենց բնակավայրերը, շնորհակալութիւն յայտնելով ժրաջան կազմակերպիչներուն:

Վարձքը կատար բոլորին:





ԱՆԴԱՄԱԿԱՆ

Մեծ ուրախությամբ է որ «Տեղեկաբու»ի այս թիւին մէջ կ'արձանագրենք միայն ծնունդ եւ ամուսնութիւններ:

ԾՆՈՒՆԴ



16 Նոկտեմբեր 2011-ին լոյս աշխարհ եկաւ Լուսինը, մեծ բերկրանք պապճառելով ծնողքին՝ Տէր եւ Տիկին Շահէ Լուսարարեանի, քրոջը՝ Սարինի, մեծ ծնողներուն՝ Տէր եւ Տիկին Գալուստ Ասլանեանի եւ բոլոր հարազատներուն:

Խոնրագրութիւնս սրբանց կը շնորհաւորէ «Տեղեկաբու»ի գեղարւեստական ձեւաւորման պարասխանաբու Շահէ Լուսարարեանն ու տիկինը եւ փոքրիկն Լուսինին կը մաղթէ առողջ եւ ուրախ կեանք, լիալուսին եւ անամպ երկինք:

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



Խոնրագրութիւնս մեծ ուրախությամբ կը փեղեկացնէ ՆԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի անդամներէն Օր. Անի Պօղոսեանի եւ Տիար Ռոպէր Թաշճեանի ամուսնութիւնը:

Օր. Անի Պօղոսեան շրջան մը եղած է ՆԲԸՄ-ի Գահիրէի մասնաճիւղի ժրջան քարտուղարուիին, ինչպէս նաեւ «Տեղեկաբու»ի համակարգչային շարուածքի պարասխանաբուն:

Չոյզին Սուրբ Պապի Խորհուրդը փեղի ունեցաւ Շաբաթ, 27 Օգոստոս 2011-ին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ:

Ձերմօրէն կը շնորհաւորենք նորապսակ զոյգը, իրենց ծնողները՝ Տէր եւ Տիկին Օննիկ Պօղոսեանը, եղբայրը՝ Տիար Զաւէն Թաշճեանը եւ հարազատները:

Իսկ նորապսակներուն կը մաղթենք սիրով, երջանկութեամբ եւ ջերմութեամբ լեցուն համարեղ կեանք մը:

Նաճոյքով կ'արձանագրենք նաեւ ամուսնութիւնը Տիար Այգ Զաքարեանի եւ Օր. Մանէ Բլարեանի, որ փեղի ունեցաւ Շաբաթ, 15 Նոկտեմբեր 2011-ին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ:

Կը շնորհաւորենք նորապսակ զոյգը, իրենց ծնողները՝ Տէր եւ Տիկին Թովմաս Զաքարեանը եւ ՆԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի անդամներ՝ Տէր եւ Տիկին Վահէ Բլարեանը, ինչպէս նաեւ մեծ ծնողները՝ Տիկիններ Աշխէն Զաքարեանը, Սիրան Երզնկացեանը եւ Տէր եւ Տիկին Կարօ Ներեպեանը:

Թող սէրն ու ծիծաղը անպակաս ըլլան նորապսակներու կեանքէն ու բարին ըլլայ իրենց ընկերակից:

« S »

